№ 89 ԿԻՐԱԿԻ 27 ԱՊՐԻԼԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 27 ԱՊՐԻԼԻ № 89

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. №.5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան՝ տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պետք է վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետեւեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրժինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի Հոգաբարձութիւնը յայտնում է, որ դպրոցի հիմնադիր՝

Յովհաննէս Ստեփանեան ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

մահվան տարելիցի առիթով, այսօր, կիրակի, ապրիլի 27-ին, պատարագից յետոյ ժամը 12-ին, Կուսանաց եկեղեցում կատարվելու է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։
380. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԷՆՔ
Կիրակի, ապրիլ 27-ին տեղի կունենայ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

հետեւեալ ծրագրով. մանկական խաղեր, խմբական երգեր՝ որ կը կատարեն Որբանոցի սաները, սինեմատոգրաֆ, ֆօկուսնիկ, օդապարիկ. վիճակախաղ, պտի-շվօ, ուդօչկա, օղակախաղ, спиральная башня, կոնֆէտի, ծաղիկներ, բուֆէտ զովացուցիչ ըմպելիներով։
Այգում կը նուագեն երկու երաժշտախմբեր։
Մուտքի տոմսակը մեծերի համար—30 կ., երեխաների և աշակերտների համար—20 կ.։
առ. Սկիզբը ցեր. ժամը 4-ից։ 371. 2—2

ԲԺԻՇԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԱՅԳԻ
Միխայլովսկի պր. № 65.
Այսօր, կիրակի, ապրիլի 27-ին, տեղի կունենայ

ԶԲՕՍԱՆՔ

ՅՕԳՈՒՏ
ՋՐԻ ՃԱՇԱՐԱՆԻ ԵՒ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ԸՆԿ.
Առաջին անգամը—ԳԱՐՆԱՆ ԵՐԹ
առ. Սկիզբը ցերեկվայ ժամը 4-ին։ 381. 1—1

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կը կայանայ հասարակական ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ
„Հայ գրականութեան գալիք օրը"
Սկիզբը երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին։
Տեղերի գները 1 ռ. 50 կ.-ից - 30 կ., մուտքի տոմսերը 25 կ.։
Տոմսակները վաճառվում են «Գիր» գրախանութում (Վելեամինովսկայա), Մատուրեանի մագազինում (Դվորցովայա), իսկ դասախօսութեան օրը երեկոյեան՝ մուտքի մօտ։
առ. (ա. օ.) 383. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յայտնում է ի գիտութիւն Քաղաքային Կենտրոնական Էլեքտրական Կայարանի պ. պ. աբոնենտների, որ Կայարանի Գրասենեակը փոխադրվել է Քաղաքային Ուպրավայի շինութիւնը, ուր և կընդունվեն էներգիայի համար առնվելիք դրամները՝ առաւօտ. ժամը $9^{1}/_{2}$-ից մինչև ցեր. ժ. $1^{1}/_{2}$-ը Ուպրավայի Կասսայում։

Ամեն տեսակ տեղեկութիւններ տրվում են, նոյնպէս և էլեքտրականութիւն անցկացնելու համար տրվող յայտարարութիւններն ընդունվում են Ուպրավայի Էլեքտրական բաժանմունքում աշխատանքի օրերը։

Կայարանի տնօրէնի հետ անձամբ գործ ունեցողները թող դիմեն Կայարանի Գրասենեակը (Էլեքտրիչեսկի պէրէուլօկ № 4) առ. ժ. 9—11-ը։ առ. 373. 2—2

Երեքշաբթի, ապրիլի 29-ին, երեկոյեան ժամը 8-ին
Ներսիսեան Դպրոցի հին շինութեան մէջ
Տեղի կունենայ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
ՕՐԱԿԱՐԳ
1) Երեւանեան նահանգին ապրիլ ամսի մէջ հասած բնական պատահարի մասին զեկուցում Ա. Աթանասեանի
2) Հաշիւ Ընկերութեան 1910—1913 թւականների:
3) Զեկուցում Ընկերութեան 1913 թ. գործունէութեան։
4) Նախահաշիւ 1914 թւականի:
5) Ընտրութիւն Ընկերութեան նախագահի, վարչութեան վեց անդամների, չորս փոխ-անդամների,
6) Ընտրութիւն վերստուգիչ յանձնաժողովի երեք անդամի և երկու փոխ-անդամների:
7) Նախագիծ Գիւղատնտեսական օգնութեան կազմակերպութեան մեր երկրի երեք լեռնային շրջաններում։
Խնդրում ենք Ընկերութեան անդամներին շնորհ բերել ժողովին։
(ա. օ.) առ. 377. 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բեռլինի պրօֆ. Պօզների)
վերադառնալով արտասահմանից, ներկայ տարվայ մայիս ամսից կը վերանորոգէ հիւանդների ընդունելութիւնը ՊԵՍՏԻ-ԳՕՐՍԿՈՒՄ։
(կ. հ.) առ. 104. 50—23

ԿԱՐՍՈՒՄ
ԲԺԻՇԿ
Լ. Գ. Տէր-Գրիգորեանց
Մասնագէտ կանացի և վեներական հիւանդութիւնների, Միխայլովսկայա փող. տուն Շավէրցեանի, նոտարի գրասենեակի մօտ։ ԸՆԴՈՒՆՈՒՄ է երեկ. ժամը 5—6-ը։
(կ. հ.) առ. 299. 10—6

ԿՈՎԿ. Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Սուրխաթեանը
Այսօր ԿԸ ԴԱՍԱԽՕՍԷ
„ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ"
վերնագրով նիւթի մասին։
Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան։
Դասախօսութիւնից յետոյ կը լինի մտքերի փոխանակութիւն։
առ. 384. 1—1

ՑԻՐԿ
Ֆ. ԻՊՊԱՏՕՎԻ
Միխայլովսկի պր. № 189, Մուշտայիդի մօտ։
Այսօր, կիրակի, ապրիլի 27-ին, տեղի կունենայ 2 ներկայացում։ Երեկոյեան ներկայացումը մասնակցութեամբ ամբողջ խմբի։ Ծրագիրը կազմված է ցիրկի վերատեսուչի հսկողութեամբ՝ բազմապիսի բովանդակութեամբ։ Երեկոյեան կը մասնակցեն օդվայ չարքերի շուրջը խօսող երաժիշտ-էկսցենտրիկներ Բօզէտտիները, յայտնի լարախաղացներ Ռօսսինիները, որոնք կը կատարեն մի շարք նոր տրիւկներ։ Երեկոյեան կը մասնակցեն նոյնպէս ցիրկի վերատեսուչ Ֆ. Իպպատօվը և գեղեցկուհի Նինա Իպպատօվան։ Հանդէս կը գան նաև անօրինակելի ժօնգլէօրներ Կանկօվսկիները։ Ցերեկվայ ներկայացումը յատկապէս երեխաների և աշակերտութեան համար։ Ցերեկվայ ներկայացման ծրագիրը կազմված է հարուստ բովանդակութեամբ՝ մասնակցութեամբ Բօզէտտիների, Ռօսսինիների, Կանկօվսկիների, Իուրօվլէօվների, Ձիասօնի։ Սկիզբը ցեր. ժ. 2-ին։ Գները պակասեցված են։
Ցիրկի վերատեսուչ՝ Ֆ. Իպպատօվ
Կառավարիչ՝ Լ. Խուճդաձէ
առ. 374. 1—1

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ
գունաւոր
Լոյս տեսած Վիէննայի Գրաֆիշէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Թիֆլիսում մեծաքանակ—Մանթաշեանցի խանութում (Մադաթեան կղզի). իսկ հատով—«Ալան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։ Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.
(կ.) առ. 122. 25—12

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելօվզօրօվ
Վ. Դ. Զակրժեվսկի
Ի. Գ. Գալամքարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ.կ.) առ. 868. 100—49

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

«Մշակի» № 87-ի մէջ տպված տեղեկութիւններից Հայկական Բարեգ. Ընդհանուր Միութեան գիտաւորութեան մասին՝ օժանդակելու Թիւրքահայ ժողովրդի տնտեսական և քաղաքակրթական բարելաւման գործին, առիթ է տալիս խօսելու մեզ նաև այն հարցի մասին, թէ նոյն ուղղութեամբ ինչ պէտք է անենք մենք ռուսահայերս։

Անյայտ իրողութիւն չէ, որ մենք ռուսահայերս վերջին 20—25 տարիների ընթացքում ահագին նիւթական զոհողութիւններ արինք, ինչպէս և բարոյական ջանքեր՝ Թիւրքական Հայաստանի ազատագրութեան համար։ Եւ այդ բոլոր ահագին նիւթական և բարոյական զոհողութիւնները մենք կատարում էինք միայն այն նպատակով, որ ազատենք Թիւրքահայ ժողովուրդը բռնակալական լծից, ձեռք բերենք բարենորոգումներ՝ ապահովող նրա կեանքը, գոյքը, պատիւը և կուլտուրական խաղաղ, ազատ զարգացումը։ Այսօր, երբ շնորհիւ ռէֆորմների նոր ծրագրի յոյս կայ, որ այդ ապահովութիւնը կարող է մօտ ապագայում իրականանալ, արդէն հարց է ծագում այժմ իսկ մտածել միջոցների մասին, թէ ինչպէս, ինչ ճանապարհով, ինչ եղանակով, ինչ գործօնների օգնութեամբ գլուխ բերենք Թիւրքահայ ժողովրդի բարոյական-մտաւոր և տնտեսական-արդիւնաբերական վերածնութիւնն ու բարգաւաճումը։ Հարիւր հազարներ, միլիոններ յումպէտս ծախսվել են, վատնվել և դեռ կարող են ծախսվել, եթէ մենք չը մշակենք մի որոշ, հաստատ սիստեմ և գործենք այդ սիստեմով։

Թիւրքահայերին օգնելու եղանակն երկու է—տնտեսական-արդիւնաբերական և մտաւոր-կուլտուրական։ Ներկայումս ամենից կարեւորը և անյետաձգելին՝ տնտեսական-արդիւնաբերականն է, հողային խնդրի հետ, որովհետև դրանից է կախված և մի այլ կարեւոր հարցի—գաղթականների վերադարձի կամ ներգաղթի հարցի աջող լուծումը։ Որքան մեզ անձամբ յայտնի է, Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան և նրա նախագահ Պօղոս Նուպար փաշայի գլխաւոր ուշադրութիւնը գրաւել է այդ վերջին հանգամանքը։ Պօղոս Նուպար փաշան, իբրև քաջ ֆինանսագէտ և տնտեսագէտ, անկասկած ամենաձեռնհաս անձն է, ծրագրի այդ մասը, այն է՝ Թիւրքահայերի տնտեսական և հողային խնդիրների հարցը աջողութեամբ իրականացնելու. այդ դէպքում մեր ռուսահայերի կապիտալիստների և ֆինանսիստների վրա պարտականութիւն է ընկնում հարկաւոր օժանդակութիւնը հայթայթել նրան, մասնակցելով այն բանկերի կամ ֆինանսական-արդիւնաբերական ձեռնարկութիւնների հաստատման, որոնց միջոցով հնարաւոր է տնտեսական-արդիւնաբերական զարգացումը և հողային կարիքի գոհացումը։

Ռուսահայ դրամատէրերը, հարուստները պէտք է իրանց դրամագլուխների մի մասի շահագործումն այսուհետև ուղղեն դէպի Թիւրքահայաստան, ստեղծելով զանազան առևտրական, ֆինանսական, արդիւնաբերական, գիւղատնտեսական ձեռնարկութիւններ, մասնակցելով եւրոպական և ռուսական կապիտալիստների սկսած համանման ձեռնարկութիւններին։

Բուն լուսաւորական, կուլտուրական կամ մտաւոր վերածնութեան հարցի մասին կը խօսենք յաջորդ անգամ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ֆաբրիկաներում և գործարաններում բողոքի գործադուլը շարունակվում է։ Երէկ չաշխատող մի քանի ձեռնարկութիւններ այսօր աշխատանքները վերսկսեցին։ Միւս կողմից, երէկվայ գործադուլներին այսօր միացան նոր ֆաբրիկաներ և գործարաններ, ի թիւս որոց Պուտիլովեան նաւաշինարանը։ Այսօր գործադուլների թիւը մօտ 20,000 է։ Ի պատասխանի բողոքի գործադուլին Պետերբուրգի գործարանատէրերը փակեցին մի շարք ձեռնարկութիւններ։ Անորոշ ժամանակով փակված են Նոր և Հին Լէսսնէր, Լիւդվիգ Նօբէլի, ռազմամթերք պատրաստող ռուսական [illegible], Զիգէլ, Սաու[illegible], Սիմէնս և Հալսկէ, Լանգէնզիպէն, Ֆէնիկս և այլ գործարաններ։ Բոլոր փակված գործարաններում աշխատում էին մօտ 10,000 բանւոր։ Մի քանի ձեռնարկութիւններում բանւորները բոլորովին արձակված են։

Երկրագործութեան դեպարտամենտը մի շարք ձեռնարկութիւններ որոշեց ի զարգացումն և բարելաւումն խոշոր անասնապահութեան Ասիական Ռուսաստանում։

Պաշտօնական։ Մայրաքաղաքի մի քանի լրագիրներում, նկարագրելով Պետական Դումայի՝ ամսիս 22-ի ընդհանուր ժողովի ժամանակ տեղի ունեցած դէպքերը, ի միջի այլոց ընդգծված է, թէ օբստրուկցիայի սկզբին ներքին գործերի մինիստրը սկսեց համոզել մինիստրների խորհրդի նախագահին և մինիստրների խորհրդի միւս անդամներին՝ հեռանալ Պետական Դումայի նիստից, և ընդմիջումներից մինի ժամանակ Պետական Դումայի նախագահը դիմեց մինիստրների խորհրդի նախագահի ներկայութեամբ ներքին գործերի մինիստրին հետեւեալ խօսքերով. «Ահա այն հետևանքը, որին ձգտում էիք», որին մինիստրների խորհրդի նախագահը նկատեց՝ «դուք բոլորովին իրաւացի էք»։ Տեղեկատու բիւրօն լիազօրված է յայտնելու, որ լրագրական այդ տեղեկութիւնները միանգամայն սխալ են. ներքին գործերի մինիստրը՝ լրագիրներից նրան վերագրվող առաջարկութիւնը չէ արել և Պ. Դումայի նախագահի և մինիստրների խորհրդի նախագահի միջև տեղի ունեցած դարձուածքը չէ եղել բնաւ։

Ներքին գործերի մինիստրութեան տեղեկութիւնների համաձայն, 67 նահանգներում հացաբոյսի դրութիւնը առ 1-ն ապրիլի բաւականին նպաստաւոր էր. բաւարար չէն միայն 8 նահանգում։

ՄՕՍԿՎԱ.—Ի նշան բողոքի 21 պատգամաւորի Պետական Դումայից արտաքսելու դէմ, գործադուլ արին 5371 բանւոր։ Գործադուլ արին Միտիշչինի վագոնակառուցարանի բանւորները։

ՄԻՆՍԿ.—Մօզիրի, Իգումէնի և Րէչիցի գաւառների շատ գիւղերում համախօսականներով որոշվել է փակել արքունի և մասնաւոր խմիչքատները։

ԿԻԵՎ.—Զինւորական խաղերը աւարտվեցին։ Զինւորական մինիստրը և միացած զօրականները մեկնեցին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Աւստրիական պատգամաւորութեան արտաքին գործերի մասնաժողովում Կրամարժը ասաց, որ միշտ այն կարծիքին է հետեւել, թէ բացառապէս երեակ դաշնակցութեան հետ կապվելը չէ կարող նպաստել միապետութեան ինքնուրոյնութեանը. Ռուսաստանի հետ հարկաւոր է բարելաւել յարաբերութիւնները, զգոյշ լինելով ուղղափառներին վերաբերեալ գործերում։

Գերմանական ազգային միութեան անդամ Վայլդնէրը, խօսելով Ռուսաստանի մասին, ի միջի այլոց յայտնեց, թէ Ռուսաստանի հետ [illegible] յարաբերութիւնների [illegible]րազմական բնաւորութիւնը, ինչպէս ընդգծված է Բերխտոլդի հաղորդագրութեան մէջ, կարելի է ոչնչանել միայն. սակայն բոլորովին ուրիշ տպաւորութիւն են թողնում այն երեւոյթները, որոնք տեղի են ունենում այդ պետութեան մէջ պաշտօնական մակերեւոյթից ցածր։

Ունգարական պատգամաւորութեան զինւորական գործերի մասնաժողովում Տիսսան օֆիցէրների ռոճիկներն աւելացնելու հարցի վերաբերմամբ ասաց, որ Ունգարիայի ֆինանսական դրութիւնը սարսափելի է, ուստի նոր յոյսեր չը պէտք է տրվեն օֆիցէրներին։

Կ. ՊՈԼԻՍ.—Շաբաթ օրը ռուսաց դեսպան Գիրսը մեկնում է Եալտա։

Օսմանեան գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, յատուկ պատուիրակութիւն, գլուխ ունենալով ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյին և բաղկացած սուլթանի ադիւտանտ Իզզէթ-փաշայից, զինւորական մինիստրութեան պաշտօնեայ Շիւքրի բէյից, ներքին գործերի մինիստրի դիւանապետ Հասան Ֆէհմի-բէյից, քարտուղարից և թարգմանից, մեկնում է Լիվադիա ապրիլի 26-ին՝ ողջունելու սուլթանի անունից Ռուսաց Ցարին։ Վերադառնալիս Թալէաթ-բէյը մտնելու է Բուխարեստ։

ՎԻԷՆՆԱ.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Դուրացցօյից, որ միջազգային վերահսկիչ մասնաժողովը մեկնեց Սանտիկարանտա՝ Զօգրաֆօսի հետ բանակցելու եպիրոսեան հարցը հարթելու մասին։

«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Դուրացցօյից, որ տաք կռիւ տեղի ունեցաւ Կօրիցայից դէպի արեւելք ալբանների և ապստամբների միջև։ Ալբանները յաղթութիւն տարան։ Թշնամու կորուստներն են 150 սպանված։ Ձեռք է ձգված յունական մեծ աւար։

Դուրացցօյից տեղեկացնում են, որ աւստրօ-ունգարական դեսպանը առաջարկել է նորից՝ տալ միջազգային վերահսկիչ մասնաժողովին կառավարութեան ֆունկցիաներ։

ՊՈՐՏ-ՍԱԻԴ.—Կայացաւ մահմեդականների ցոյց ընդդէմ յոյների։ Յունական եկեղեցու պատուհանները ջարդված են, վիրաւորված են մի քանի յոյներ։ Յունական հիւպատոսը բողոքեց եգիպտական իշխանութիւններին։

ՎԻԵՆՆԱ.—Ֆրանց-Յովսէփ կայսրի ընդհանուր առողջական դրութիւնը անփոփոխ է, ցերեկով հազը թուլացաւ: Կայսրը մի ժամ նստած էր պատուհանի մօտ և ընդունեց բաւարական պրինցին:

ԿՈԼՄԱՐ.—Վիլհէլմ կայսրը աւտօմօբիլով այցելեց Էվօ, ուր տեղի են ունենալու զինւորական լեռնային վարժութիւններ:

ՀՌՈՄ.—Հակաաւստրիական ցոյցերը տարածվել են ամբողջ Իտալիայում: Շատ քաղաքներում, ինչպէս Մեսինայում և Միլանում, տեղի են ունեցել խոշոր ընդհարումներ ցուցարարների, զինւորների ու ոստիկանութեան միջեւ: Միլանում կալանաւորվել են 100 ցուցարար: Մեսինայում աւստրիական հիւպատոսարանը պաշտպանվում է զօրքերով:

ՍՊԼԵՏ.—Կրօնական հանդէսի ժամանակ ծագեց մեծ հակա-իտալական ցոյց: Զօրքերը և ժանդարմէրիան միջամտեցին: Իշխանութիւնները փակեցին սրճարաններն ու հիւրանոցները:

ԲԵՐԼԻՆ.—Ռէյխստագի բիւջետային յանձնաժողովում ֆինանսների պետական մինիստրը յայտնեց, որ, յիրաւի, օտարազգի պետութիւնները բողոքել են օտարահպատակներից զինւորական տուրք վերցնելու դէմ. Ներկայումս այդ բողոքը քննվում է արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

Ռէյխստագում զինւորական մինիստրութեան նախահաշւի երկրորդ ընթերցման ժամանակ զինւորական մինիստրը խօսեց Գերմանիայում միլիցիա մտցնելու դէմ:

ՄԱԴՐԻԴ.—Ծովային մինիստրը պալատին օրինագիծ ներկայացրեց, որի համաձայն առաջարկվում է ինն տարիների ընթացքում 36 միլիոն պեզէտ ծովային պաշտպանման համար: 1917 թ. ծով է իջեցվելու մի զրահանաւ, որի արժէքն է 70 միլիոն:

ԲԵԼԳՐԱԴ.—Ասում են, որ կառավարութիւնը հրաժարական է տալու:

ՄԻԱՑԵԱԼ-ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԵԿՍԻԿԱՅԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 ապրիլի

ՄԵԿՍԻԿԱ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը դիմեց հաշտութեան միջնորդներին, բողոքելով հիւսիս-ամերիկացիների դէմ՝ Վէրակրուցում զինադադարը խախտելու առիթով: Միջնորդները խոստացան դիմել պրեզիդենտ Վիլսոնին:

ՎԱՇԻՆԳՏՕՆ. — Գեներալ Ֆէնստօնից ստացված տեղեկութիւնների համաձայն, Մեկսիկայում ամեն րոպէ սպասվում է Խուէրտայի անկումը և անիշխանութիւն: Զինւորական մինիստրութիւնը մտադիր է մօտ 60,000 զինւոր ափ իջեցնել Վէրակրուցում կամ պատրաստ պահել շոգենաւերի վրա:

ՄԱԶԱՏԼԱՆ (Մեկսիկա).—Մի ապստամբ օդագնաց քաղաքի վրա ռումբ նետեց. սպանվեցին 4, վիրաւորվեցին 8 հոգի:

ՆԻՒ-ԵՕՐԿ.—60 նաւթային ընկերութիւնների ներկայացուցիչները՝ Տամպիկօյի շրջանից՝ վճռել են միջնորդել Վիլսոնի առաջ, որպէսզի պաշտպանութեան տակ առնըվեն նաւթահանքերի բանւորները:

ՀՌՈՄ.—Վատիկանին կից գտնվող դեսպանը (Չիլի նահանգի) զրուցեց կարդինալ Մերրի-դէլ-Վալի հետ Մեկսիկայի և յօգուտ հաշտութեան միջնորդ հանդիսանալու առիթով: Մերրի-դէլ-Վալը հեռագրեց Մեկսիկայի արքեպիսկոպոսին, տեղեկացնելով որ պապը ցանկութիւն է արտայայտել, որպէսզի երեք հանրապետութիւնների վեհանձն նախաձեռնութիւնը յօգուտ հաշտութեան էական նպաստ ծառայէ Մեկսիկայի հանգստութեան ու բարգաւաճման համար և որպէսզի այդ ցանկութիւնները յանձնվեն Խուէրտային և Մեկսիկայի բոլոր ազդեցիկ անձանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սղնախի շրջանի գիւղական կեանքից

Սղնախ, 21 ապրիլի

Սաքօբօ գիւղում մի մայր իր երեխային ծիծ տալու ժամանակ սպանվեց իր հօրեղբօր որդու արձակած գնդակից: Մարդու անզգուշութիւնից հրացանը տրաքվում է և գնդակը դիպչում է դժբաղդ մօր գլխին: Նոյն գիւղում մի սարամնիկ ձիով ընկնում է հորի մէջ և ձիու տակն է մնում: Մեծ դժուարութեամբ դուրս է գալիս հորից. ձին մեռնում է:

Կախէթի երկաթուղու վրա ռելսները դրված են մինչև Կաճրէթի գիւղը: Մինչև ամսիս վերջը գիծը կը մօտենայ Զալաուբանի գիւղին, մինչև մայիսի վերջը՝ Գուրջաանի գիւղին: Մեծ կամուրջներ Վէլիսցիխէ և Ջուէլալղի չայլաղների վրա շուտով կառուցվեն:

Բօդբիսխէվի գիւղում հիմնվեց սպառողական ընկերութիւն «Յոյս» անունով, որը սկսել է իր գործունէութիւնը: Նոյն գիւղի բնակիչները վճռել են ջուր անց կացնել գիւղից դէպի իրանց կալերը $3^{1}/_{2}$ վերստ հեռաւորութեան վրա, յատկացնելով սրա համար հարկաւոր գումարը: N. N.

—

Մկրտիչ ք. Տէր-Յովհաննիսեանի մահը

Գանձակ, 23 ապրիլի

Ամսիս 14-ին վախճանվեց քաղաքիս ս. Յովհաննէս եկեղեցու միաբան Մկրտիչ ք. Տէր-Յովհաննիսեանը 75 տարեկան հասակում:

Հանգուցեալի մարմինը փոխադրվեց եկեղեցի շաբաթ երեկոյեան, իսկ թաղումը տեղի ունեցաւ կիրակի, ամսիս 20-ին:

Պատարագիչ փոխանորդ Լեւոն վ. դամբանական ճառ խօսեց, դրուատելով հանգուցեալի զանազան ասպարէզներում մատուցած ծառայութիւնները:

Հանգուցեալը ծնվել է 1839 թ. ապրիլի 14-ին Գանձակի գաւառի Մանասի գիւղում. 3 տարեկան հասակում զրկվում է հօրից, իսկ 7 տարեկանից սկսած սկզբնական կրթութիւնը ձեռք է բերում Պարիս գիւղի ժամանակի ծխատէր Մովսէս ք. Տէր-Աբրահամեանի մօտ, ապա անցնում է Ամարասի և Գանձասարի վանքերը՝ կատարելագործվելու:

Գալով Գանձակ՝ նա բաց է անում մասնաւոր դպրոց 1857 թ., որ տեւում է մինչև 1874 թ., միաժամանակ հրաւիրվում է ծխ. դպրոց ուսուցչութեան պաշտօնով 1867—1872 թ.:

Հանգուցեալը սարկաւագ է ձեռնադրվում 1869 թ., իսկ քահանայ՝ 1873 թ. ժամանակի թեմ. առաջնորդ Մակար արքեպիսկոպոսից (ապա կաթողիկոս):

1890—1900 թ. եղել է կրօնուսոյց տեղիս տղայոց գիմնազիայի, միաժամանակ և կրօնուսոյց աղջկանց գիմնազիայի 12 տարի. եղել է մի քանի տարի գործակալ եկեղեցիների և 4 տարի դպրոցի հոգաբարձու, իսկ մօտ 18 տարի հոգևոր կառավարութեան անդամ և 4 տարի կրօնուսոյց Միքայէլեան որբերի դպրոցի ձրիաբար. բոլոր պաշտօնները նա վարել է բարեխղճաբար և արժանացել զանազան վարձատրութիւնների հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնների կողմից:

Հանգուցեալը վայելում էր ամենի սէրն և համակրանքը:

Վերջին յարգանքը տալու համար եկեղեցի էր եկել բաւական ժողովուրդ, ներկայ էին և քաղաքիս բոլոր հոգեւորականները և գիւղերից եկած ուրիշ երկու քահանայ և Ծաղկոցի անապատի վանահայր 110-ամեայ Յովհ. վ. Բարաղամեանը: Օծման կարգը կատարեց Գրիգոր ա. ք. Թումանեանը:

Եկեղեցում փոխանորդ Լեւոն վ. հրաւէր կարդաց հանգուցեալի ծխականներին ընտրել արժանաւոր յաջորդ հանգուցեալի փոխարէն: Ծխական

—

Սպիտակ Ծաղկի տօնը Բաթումում

Բաթում, 23 ապրիլի

Ամբողջ մի շաբաթ տեղացող անձրեւներից յետոյ՝ ամսիս 22-ին եղանակը փոխվեց:

Առաւօտ կանուխ գործի գլուխ անցնող թէ պարոններն և թէ տիկնայք գրաւել էին իրանց տեղերը: Քաղաքիս փողոցներում և հրապարակներում, այդ տօնի համար, յատուկ քիօսկեր էին շինված, Սպիտակ Ծաղիկներ ծախելու համար. բացի դրանից՝ ամենուրեք կը հանդիպէիք կանանց, օրիորդների և աղամարդկանց, որոնց կրծքած տուփերը ձեռքներին՝ դիմում էին անխտիր բոլորին, կամ աւելի շուտ, կարելի է ասել, ժողովուրդը ինքն էր ընդառաջ գնում, և մի քանի ժամից յետոյ՝ բոլորի կրծքերը զարդարված էին Սպիտակ Ծաղիկներով:

Ամբողջ քաղաքը հանդիսաւոր և տօնական տեսք էր առացել: Ժամը 11-ին Մարիինսկի պրօսպէկտով անցաւ նահանգապետը իր ամուսնու հետ, աւտոմօբիլի մէջ նստած, որին հետեւում էին բարձրաստիճան զինւորականներ և բազմաթիւ ժողովուրդ կառքերի մէջ նստած: Առջևից նւագում էր զինւորական երաժշտախումբը: Աւտոմօբիլը և կառքերից շատերը զարդարված էին Սպիտակ Ծաղիկներով: Շրջելով քաղաքիս գըլխաւոր փողոցները՝ նա նորից վերադարձաւ Մարիինսկի պրօսպէկտ:

Լսեցի, որ մինչև ժամը 2-ը այլևս ոչ մի Ծաղիկ չէր մնացել, որից յետոյ գործի գլուխ անցնող մարմինը պատրաստել էր տալ մեծ քանակութեամբ Ծաղիկներ, ի նկատի ունենալով որ եղանակի լաւ լինելու պատճառով՝ բուլվարում մեծ քանակութեամբ կարելի է ծախել:

Նոյն օրը, Երկաթէ Թատրոնում Կաշիրինի խումբը խաղում էր «Дѣвушка съ мышкой» Ֆարս-կոմեդիան, որը գրաւել էր հսկայական բազմութիւն: Այդտեղ ևս մեծ քանակութեամբ Ծաղիկ ծախվեց:

Մի խօսքով՝ Սպիտակ Ծաղկի վաճառքն այս տարի շատ աջող անցաւ, և, համարձակ կերպով կարելի է ասել, արդիւնքը՝ համեմատելով միւս տարիների հետ՝ կրկնապատիկ, եռապատիկ կը լինի:

Ա. Նիկողոսեան

—

Մեր գիւղերը

Կարս, 25 ապրիլի

Յունվարի 7-ին անձրևները [illegible] և կտուրները կաթեցին: Մարտի կէսից սկսվեցին խառն ի խուռն օրեր՝ անձրև, շոգ, կարկուտ, սառնամանիք, թէփի ձիւն: Ապրիլի մէջ լեռները ձիւնեցին և ամեն բան սառաւ: Այժմ դաշտերը աշնան նըման չոր գետին են դառել. տաւարը արածելու ոչինչ չունին: Այս րոպէիս կատարեալ ցուրտ է. շատերը դեռ ձմեռվայ հագուստի մէջ են: Ունեւորները դեռ վառում են վառարանները. չունեցողները դողալով անց են կացնում: Առեւտուրը կանգ է առել. ամեն բան թանգացել է: Ծանր հոգսերի մէջ է ժողովուրդը: Հոգսերից ազատ են միայն «շանտէկլիօր» և մանաւանդ «տանգօ» մօդաներին հետեւողները: Սրանց համար մի «տանգօ» վերարկուն աւելի հետաքրքրական է, քան զանազան տեղերում պատահած աղէտները:

Սարգիս Տէր-Մելքիսեդեկեան

ԱՂԷՏԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

—

Ի պատասխան Կ. Հ. Բ. Ընկ. տուած հեռագիրների նոյն Ընկ. Վաղարշապատի և Երևանի ճիւղերի վարչութիւններից ստացված են հետեւեալ պատասխան-հեռագիրները.

1) Էջմիածնի գաւառի վերաբերեալ յայտնում ենք ստուգված տեղեկութիւններ: Ամբողջ գաւառում ոչնչացել են խաղողի այգիները: Մի քիչ անվնաս է մնացել Կուրջկուլաղը: Զգալի կերպով վնասվել են պտուղները: Վաղարշապատի վարչութիւն

2) Սառնամանիքները ոչնչացրել են Երևանի, Էջմիածնի և Աշտարակի շրջաններում բերքի 50 տոկոսը. Կամարլուի, Նախիջևանի և Սուրմալուի շրջաններում, 60 տոկոս. ընդհանուր վնասը գիւղատնտեսների և խոշոր գործարանատէրերի հաշւով 3 միլիոն ռուբլի է: Երևանի վարչութիւն

—

Հին-Նախիջեւան, 19 ապրիլի

Ապրիլի 17-ին ցուրտ ու սառնամանիք էր. տեղաց ձիւնախառն անձրև. գիշերը ցուրտն ու քամին աւելի սաստկացան: 18-ի առաւօտեան յուսահատութիւնը պատեց այգեգործ ու բօստանչի դասակարգի սրտերը: Գիշերս ցուրտը տարել էր այգիները: Այգիների, խաղողի մատների մի մասը բերք ու պտուղներով սևացաւ, գլուխը քաշ գցեց ու [illegible] չորացաւ, ճմռվեց: Կան այգիներ, որոնց առաջը բաց է եղել դէպի ձիւնապատ լեռնաշղթաներն ու հսկայ Մասիսները. այգիպանների վնասը չափազանց մեծ է, կէսից աւելի ճմռվել են: Կան այգիներ, որոնց մի-երրորդ կամ մի-չորրորդ մասն են վնասվել. պատսպարված այգիները ազատ են մնացել: Այգեգործները դրամով զգալի վնաս են կրում. վնասը հաշւում է 100,000-ներ. պրած և մաքուր այգիները համեմատաբար շատ քիչ են վնասվել:

Բնութեան արհաւիրքները մեր կողմերում նորութիւններ չեն, մանաւանդ վերջին տասնեակ տարիներում կլիման միանգամայն յեղաշրջվել է. և սակայն մեր շինականը, հողագործը, այգեգործը՝ համակված քէն ու նախանձով դէպի հարեւանն ու ընկերը, բարեկամը կամ ազգականը, և տարված ներքին խռովութիւններով՝ իր դրամական միջոցը, եռանդն ու ժամանակը սպառում է իր հակառակորդին տապալելու համար, մինչդեռ բնութեան արհաւիրքների դէմ մաքառելու մասին ոչ ժամանակ ու եռանդ և ոչ էլ խաղաղ սիրտ ու տրամադրութիւն է ունենում:

Ա. Տէր-Ստեփանեան

—

Մեղրի, 23 ապրիլի

Ամսիս 17—18-ին կրկին մեծ քանակութեամբ ձիւն եկաւ մեղ մօտ, հալվեց, բայց Մեղրիից վերև ամբողջ բուսականութիւնը թաղվեց ձիւնի սպիտակ սաւանի տակ: Վերևի գիւղերում երկու անգամ կտուրները սրբեցին: Բացի Մեղրիից և Լեհվազից միւս վերևի գիւղերի ծառապտուղներն ու թթենիների տերևները փչացան: Շատերը իրանց շերամը դէն ածեցին: Մեղրիում էլ քիչ ծառապտուղ կայ այս տարի: Շերամի աճեցումը առաջ է գնացել, իսկ տերևը կանգ առել: Ցուրտը շարունակվում է: Սպասվում է թթենու տերևի սով—թանգութիւն:

Վաղը Մեղրի պիտի գայ Օրդուբաթի պօստի կառավարիչը ժամանակաւոր բնակարան վարձելու՝ Մեղրիում բաժանմունք բաց անելու: Գիւղական կառավարութեան Մեղրիում շինելը հաստատված է և լեհվազցի թուրքերի խնդիրը նահանգապետից մերժված:

Ե. Վարդանեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Պետերբուրգ, 25 ապրիլի

Նախագահում է Ռօձեանկօն:

Հերթին կադէտների հետեւեալ առաջարկութիւնն է. նշանակել երեք օր ժամանակամիջոց այն մասնաժողովի համար, որ քննելու է պատգամաւորական խօսքի ազատութեան հարցը:

Առաջինը ստորագրած Միլիւկօվը, բերելով Չխէիձէի ճառից այն կտորները, որոնց համար և նա պատասխանատւութեան է ենթարկվում, և չը գտնելով նրանցում յանցանքի տարր, անհրաժեշտ է գտնում փոխել օրէնքի երկմիտ բնագիրը և դարձնել այն պարզ. այդ հարցը չը պէտք է ուշացնել և անհրաժեշտ է մասնաժողովին տալ երեք օր ժամանակ զեկուցում ներկայացնելու համար:

Լինցը գտնում է, որ ներկայ հարցը ոչ թէ Դումայի կանոնադրութեան հարցն է, այլ ամբողջ երկրի հարցը, երկրի՝ որի օրէնսդրական հաստատութիւնները պէտք է ազատօրէն արտայայտեն իրանց կարծիքը, որպէսզի ճշմարտութիւնը միշտ էլ յայտնի լինի (ծափեր ձախից և կենտրոնում): Պատգամաւորների ճառերը ցենզուրայի չը պէտք է ենթարկվեն:

Համաձայն Միօրշաւտսկիի՝ քուէարկութեամբ ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունվում է նշանակել մասնաժողովի հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԼՔՈՀՈԼԻԿԸ

(Նովել)

—

Առաւօտ էր:

Շտապով գնում էի դաս. ճանապարհս անցնում էր օղետան մօտով: Այստեղ ես միշտ խմբված էի տեսնում զանազան բանւորներ, արհեստաւորներ, որոնք նախ քան թէյը՝ պարտք էին համարում թրջել իրանց կոկորդը մի փոքրիկ շիշ օղիով և ապա միայն անցնել աշխատանքի:

Ռուսաստանում օղու մոնոպոլիա է. արգելված է օղետան մէջ՝ ներսը խմելը, և այդ է պատճառը, որ խմել ցանկացողներից ամեն մէկը օղու փոքրիկ «մերզավչիկը» ձեռին դուրս է գալիս և հէնց դռանը գլխին է քաշում...

Կանգնածներից մի քանիսը, գլխաւորապէս անգործները, տեսնելով անցորդներին՝ այս մայթից միւսն էին վազում և իրանց ուռած-փքված դէմքերով պարզում էին ձեռները և ողորմութիւն խնդրում շատ-շատ անգամ իրանց երեխաների, կնոջ, ընտանիքի անուններով...

— Ընտանիքս քաղցած է. քանի օր է որ երեխաներս ուտելիք չունեն. ողորմութիւն արէք...

— Զինւորութիւնից նոր վերադարձած՝ պաշտօն չունեմ. ընտանիք 5 հոգի ենք. օգնեցէք մի քանի կոպէկներով...

— Տանս ծանր հիւանդ ունեմ. դեղի փող եմ հաւաքում. օգնեցէք՝ ինչքան կարող էք...

— Նախկին ուսանող Կազանի համալսարանի. քաղցած եմ. հասկացէք ինձ և օգնեցէք...

Ահա սովորական այն դարձուածքները, որ ամեն օր լսում էի ես այդ ճանապարհով անցնելիս...

Լսում էի և անուշադիր թողնում:

Փողոցում աղքատներին ողորմութիւն տալու սովորութիւն չունէի. մանաւանդ ինձ վրա չափազանց վատ տպաւորութիւն էր թողնում, երբ ես պարզ և աչքերս տեսնում էի, թէ ինչպէս էին այդ մարդիկ խաբում, ստախօսում և իրանց դժբաղդ ընտանիքի անդամների քաղցածութիւնը շահագործում յօգուտ իրանց...

Այս անգամ՝ շտապով գնալիս՝ առաջս կըտրեց դրանցից մէկը. մօտաւորապէս 40 տարեկան մի անձնաւորութիւն, զգզված մազերով և ոչ այնքան հին, որքան անմաքուր և ցեխոտ հագուստով: Նա համարձակ քայլերով մօտեցաւ ինձ և կանգնեց առջևս.

— Ես ալքոհոլիկ եմ,—ասաց նա խռպոտ ձայնով,—և ձեզանից խմելու փող եմ խընդրում... աշխատաւոր եմ, արհեստաւոր, բայց ալքոհոլիկ եմ, հասկանում էք... Ժամանակ-ժամանակ խմում եմ. ով է, ինչ է դրա պատճառը, տեղը և ժամանակը չէ քննելու: Այժմ էլ երկու շաբաթ է, որ խմում եմ անընդհատ, չեմ ուտում համարեա ոչինչ, միայն խմում եմ: Փող տուեցէք ինձ, խնդրում եմ, որ արագ անեմ և խմեմ. հէնց իմացէք որ թէյ էք խմացնում ինձ...

Այնքան համարձակ, այնքան անկեղծ, այնքան համոզեցուցիչ էին հնչում այս խօսքերը, որ նրանք ինձ ստիպեցին իսկոյն ձեռս տանել գրպանս...

— Ո՛չ աւելորդ խօսքեր կը շռայլեմ ձեզ, ոչ էլ կը կեղծեմ ձեր առաջ, ձեզ խղճմտանքի բերելու նպատակով. ես մուրացիկ չեմ և ոչ էլ աղքատ. ես հիւանդ եմ, հիւանդ ալքոհոլիկ...

Ասաց նա մի տեսակ վեհանձն հպարտութեամբ շեշտելով արտասանած ամեն մի բառը...

Ես դրեցի նրա բուռը մի դրամ:

— Վերցնում եմ այս դրամը ձեզանից,—նորից խօսեց նա,—և չեմ ամաչում. ես համարձակ նայում եմ ձեր աչքերին և չեմ վախենում. ես չեմ խաբում ձեզ. ես անկեղծ եմ. ես հիւանդ եմ, բայց ես կաշխատեմ. իսկ եթէ առողջ ժամանակս դուք ինձ պատահէք առանց աշխատանքի, թքեցէք իմ երեսին... Բայց դրա ժամանակը չէ, սաստիկ ծարաւ եմ...

Նա մեկնեց ինձ իր ձեռը. պինդ սեղմեց իմը և համարձակ քայլերով դիմեց դէպի փողոցի միւս կողմը՝ օղետունը:

Ես չը հեռացայ. կանգնած նայում էի նրա ետեւից:

Նա շտապով մտաւ օղետուն և իսկոյն դուրս եկաւ մի փոքրիկ շիշ ձեռին. նա հէնց դռանը խփեց ձեռով շշին, խցանը դուրս թռցրեց և սկսեց խմել...

Բայց ոչ: Նա չէր խմում, նա ծծում էր շշի մէջ պարունակված հիւթը...

Վերջացրեց, բերանը սրբեց և ճանապարհ ընկաւ...

Որքան անկեղծութիւն, որքան մաքրութիւն այդ հասարակ հիւանդոտ մարմնի մէջ,—մտածեցի ես և շտապեցի իմ գործին:

Աստրախան Ս. ք. Ասլանեանց

ՍՈՒՐԷՆԸ

—

— Այսպէս ուրեմն, Արմէն, իմ պատժի ժամանակամիջոցը լրանում է. վաղը ինձ կազատեն բանտից. ես դուրս կը գամ բանտից, կը տեսնեմ ծնողներիս, բարեկամներիս, ընկերներիս, իմ պաշտելի Շուշանին. քանի՜ տարի է, չորս երկար ու ձիգ տարիներ, ոչ ոքին չեմ տեսել, զրկված ազատութիւնից. վաղվանից ինձ համար կը սկսվի նոր կեանք, նոր աշխարհ, ազատութի՜ւն... որքան քաղցր են...,—ուրախութեամբ բացագանչեց իմ վիճակակից ընկեր Սուրէնը, որի հետ բանտարկված էինք մի նկուղում:

— Դու երջանիկ ես, եղբայր քեզ, որովհետև վաղը քո յարութիւնն է. կերթաս բարով, Սուրէն-ջան. բարևիր ծնողներիս, ընկերներիս, համբուրիր այնտեղ, որտեղ մենք երեկոները միշտ մինչև կէս գիշեր նստել ենք, հրապուրվել բնութեան հրաշալիքներով, խօսել վիճել կեանքի հրատապ հարցերի մասին, ոգևորվել վսեմ գաղափարների քաղցր հեռանկարով... Դուրս ես գալիս այստեղից, ապրիր նոր կեանքով: Կեանք, կռի՜ւ, գաղափար. առանց ապրելու իսկական իմաստը. առանց դրանց կեանքը, ապրելը իմաստ, նպատակ չունի, դատարկութիւն է. Նարմը, տեսնես ինձ համար էլ յարութիւն պիտի լինի թէ ոչ:

— Այո, Արմէն, իմ առաջնորդող աստղը, ինձ ոգևորողը կեանքն է, աղմկալից, յուզող կեանքը իր վսեմութեամբ, իր բարձրութեամբ. դու մի յուսահատվիր, Արմէն, դու էլ շուտով կազատվես. ինչ է մնացել,—սկսեց հաշւել իմ պատժի ժամանակամիջոցը,—մէկ, երկու, երեք, չորս, հինգ... թող օրերը չը հաշւենք. այսպէս շատ է երկար թւում. մէկ, երկու, երեք, այն էլ կէս, մնացել է երեք և կէս ամիս. դու միայն քեզ լաւ պահպանիր և, որ գլխաւորն է, շատ չը մտածես,—յուսադրելով ինձ ասաց Սուրէնը:

— Ի՞նչպէս պիտի լուսացնեմ այս գիշեր, ե՞րբ պիտի լուսանայ, դեռ 18 ժամ կայ մինչև վաղը, տասն և ութ ժամ... թւում է, թէ 18 տարի է... մի ժամ անցել է, մնացել է 17 ժամ, մէկն էլ կանցնի, կը մնայ 16 ժամ. շուտ կանցնեն, չէ:

— Ի հարկէ, շուտ կանցնեն. նստի՛ր, հանգստացիր. այդ սաստիկ ջղայնութիւնը կարող է վնասել առողջութեանդ:

— Այսօր Շուշանը պիտի գայ. բարձրանամ-տեսնեմ՝ գալիս է թէ ոչ. խեղճն էլ է անհամբեր դարձել ինձ նման:

—Մի՛ բարձրանար, Սուրէն, մի նայիր պատուհանից. այսօր այն խստապահանջ զինւորն է կանգնած, կը խփի:

Ինձ չը լսեց. քաշեց նստարանը, բարձրացաւ վրան և սկսեց նայել:

— Գալիս է, գալիս է. Շուշան, Շուշան, իմ անմահ Շուշան,—բարձրաձայն գոչեց Սուրէնը:

— Էյ, մի՛ նայիր...

Եւ դրա հետ որոտաց հրացանի ձայնը:

Սուրէնը փռվեց գետնի վրա:

— Վա՛յ, ազատ... Շուշ...,—արձակելով անշնչացաւ:

Իմ առջև Սուրէնի դիակն էր փռված, մի քանի րոպէ առաջ ազատութիւն, կեանք աղաղակող Սուրէնի: Նա, կեանքի այդ երկրպագուն, մի քանի ժամից յետոյ պիտի դուրս գար նոր աշխարհ, նոր կեանք տեսնելու, գրկախառնվելու իր ծնողների, իր պաշտած Շուշանի հետ, բայց խստապահանջ զինւորի անողորմ գնդակը վերջ տուեց նրա յոյսերով լի յետագայ կեանքին...

Արմ. Ն. Աղախանեան

Հին-Բուխարա

ԳԵՏԱԿԻ ՄՕՏ

(Կ. Տետմայերից)

—

Գետակ վշշացող, գետակ խշշացող... գոցված աչքերով ունկնդրում եմ քեզ, որ շառաչում ես՝ միալար-անվերջ...

Հոգիս լցվում է մի անհուն թախծով, անսահման վշտով:

Այդ վշշոցը,—միշտ միակերպ, միօրինակ ու անվերջ,—ծանօթ է ինձ տարիներէ ի վեր, դեռ ամենավաղ մանուկ օրերից. ու երբ մտքով խոր ես սուզվում անցեալի, տեսնում եմ ինձ այդ միևնոյն գետակի մօտ, դարձեալ գոց աչքերով՝ նրա վշշոցը լսելիս՝ նոյն թախծով, նոյն անսահման ծանր վշտով:

Անցան մանկութեանս, պատանի հասակիս տարիներն անհետ. այժմ էլ են սահում կեանքիս տարիներն ու անցնում անդարձ. և կրկին անգամ գետակի մօտ եմ՝ նոյն թախծոտ հոգով, նոյն անհուն վշտով...

Կարծես ցաւում եմ, որ կորցրի այն, ինչ էլ չի դառնայ. կարծես տխրութիւնն ինձ համակում է, որ կորցրի մի թանգագին բան, որ ես չեմ տեսել, այլ լոկ նախազգացել գոյութիւնը նրա. կարծես արտասւում եմ մի բանի համար, որ հեռանում է, ու սակայն բնաւ չի եկել մօտս...

Եւ քանի՜ անգամ ձեռքս մեկնեցի դէպ բաղձի ժպիտը, որ խաբեց ինձ. և ապա կրկին գոցված աչքերով կանգնած գտայ ինձ գետակի ափին ու ականջ դրի նրա միալար անվերջ վշշոցին՝ միևնոյն թախծով, նոյն անսահման հոգեկան վշտով...

Մի՞թէ միշտ այսպէս պիտի ճնշվի հոգիս:

Եւ բնա՞ւ երբեք այդ գետակի մօտ իմ մէջ չեն զարթնի այլ զգացմունքներ, բայց եթէ միայն դարձեալ նոյն թախիծն ու անհուն վիշտը:

Գ. Մելոյեան

մար ոչ թէ երեք, այլ եօթ օր ժամանակամիջոց։

Շարունակվում են ընդհանուր վիճաբանութիւնները նկատի առիթով։ Ներկայ է Բարկը։

Խօսում են Դեմչենկօ, Պոստնիկով, Կրինսկի, Լէմպիցկի։

Երեկոյեան նիստում Ջաֆարովը պաշտպանում է այն յայտարարութիւնը, որով առաջարկվում է դիմել Կովկասի փոխարքային՝ խնդրելով բացատրութիւն, թէ ինչ չափով է օգնութիւն տրվելու Երևանի նահանգի մի քանի տեղերի շինական ազգաբնակութեանը։

Հարցն ընդունվում է միաձայն։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Զինւորական կրթարանների Օգոստափառ գեն.-վերատեսուչ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ ապրիլի 24-ին ներկայ գտնվեց կադետսկի կորպուսի զանազան դասարանների դասերին։

◆ Փոխարքան հաստատել է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի զեկուցումը՝ իգական գիմնազիաների սանուհիների նոր նշանագեստ կրելու մասին։ Այդ նշանագեստները լինելու են ամենքին յայտնի, ներկայումս գործածվող զգեստները գոգնոցներով և անգլիական ձևի գորշագոյն գլխարկներ գորշագոյն ժապաւէնով, որի վրա, գիմնազիայի աշակերտների նման, պէտք է ամրացվի մետաղեայ մի նշանակ՝ գիմնազիայի խուցխաններով։ Գլխարկի վրա ոչ մի զարդարանք չի թոյլատրվում։

◆ Քաղ. վարչութիւնը, լսելով վարչութեան անդամ Մ. Ա. Զաքարի զեկուցումը մսի սակագինը վերացնելու մասին, սկզբունքով համաձայնեց սակագինը վերացնելու մտքին այն պայմանով, որ այնպիսի գրութիւններ մշակվեն, որոնցով կանոնաւորվի մսի սակագինը և խոշոր չափով հանդիսանայ մսագործների համաձայնութեան։ Դումայի առաջիկայ նիստում մի զեկուցում է մտցվելու տաւարի մսի սակագինը առայժմ 1 կոպէկով աւելացնելու համար։

◆ Փոխարքան Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Ն. Ֆ. Ռուդոլֆին ուղարկել է Պետերբուրգ, որպէս իր ներկայացուցչի, միջվարչական խորհրդակցութեանը, Թիֆլիսի պոլիտեխնիկումի կառուցման հարցը քննելու ժամանակ մասնակցելու։

◆ Կիրակի օր, ապրիլի 20-ին, մի ամերիկացի նաւորդ պարոն կորցրել է—յայտնի չէ բժ. Կարապետեանի այգում զբօսանքի ժամանակ, թէ ֆունիկուլէրի վագոնին, պարոնը չէ կարողանում հաստատապէս ասել—մի սև թղթապանակ, որի մէջ եղել են ամերիկական 35 տոլլար թղթադրամ, յունական 5 դրախմ թղթադրամ և ռուսական 16 րուբլի թղթադրամ։ Գտնողից խնդրվում է իր համար վերցնել 16 րուբլին իբրև վարձատրութիւն, իսկ մնացածը բերել «Մշակի» խմբագրութեան գրասենեակը՝ յանձնելու ըստ պատկանելոյն։

◆ Այսօր երեկոյեան ժամը 8-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում, պ. Սուլխանեան կը դասախօսէ «Կանանց հարցի» մասին։ Դասախօսութիւնից յետոյ տեղի կունենայ մտքերի փոխանակութիւն։

◆ Չքաւոր Հրէայ Ուսանողներին Օգնող Թիֆլիսի Ընկ. թոյլատրված է մայիսի 7-ին մի զբօսանք կազմել Ժողովրդական Տանը, Ընկերութեան միջոցները աւելացնելու նպատակով։

◆ Այսօր բժ. Կարապետեանի այգում կը կայանայ մի զբօսանք յօգուտ ձրի ճաշարանի և գիւղատնտեսական գաղութի ընկերութեան։ Սկիզբն է երեկ. ժամը 4-ից։

◆ Այսօր, ամսիս 27-ին, փակվում է Մելիք-Ազարեանի շէնքում եղած պատկերահանդէսը։

◆ Նոր հիմնվող առևտրա-արդիւնաբերական բանկի ակցիաները ծախվում են նոյնպիսի աջողութեամբ, ինչպէս առաջին օրերում։ Ակցիաների վաճառումը շարունակվելու է մինչև ապրիլի 30-ը։

◆ Թիֆլիսի նահանգապետը մօտ օրերս թոյլ է տուել տիկին Ֆլօր. Վարդանեանին շարունակել այս ամառ մանկական ակումբը Կօջօրում։

◆ Խմբագրութիւնը ստացաւ «Նոր Գրադարանի» № 6 գրքոյկը, Ա. Լունաչարսկիի «Գեղարուեստը գեղարուեստի, թէ գեղարուեստը կեանքի համար» խորագրով, թարգմանութեամբ Յակ. Յակոբեանի։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարում, Պետական Դումայի թարգմանութեան մէջ, Շիդլովսկիի ճառում «կարևոր կրիտիքական րոպէին»-ի փոխարէն տպվել է դարաւոր կրիտիքական րոպէին։

ԿՈՎԿԱՍ

◆ Երկրագործական դեպարտամենտի Գանձակի հանքային վարչութիւնը թոյլատրել է Ն. Մամիկոնեանին պղնձի հանքի հետազօտութիւններ կատարել Գանձակի նահանգի Ծիրանի-ձոր տեղում։

◆ «Սպիտակ Ծաղկի» օրը Երևանում անցել է լաւ։ Ծաղկի վաճառքից ստացվել է 1479 րուբլի։

◆ Երէկ, ամսիս 26-ին, Սուխումից մենք ստացանք հետևեալ հեռագիրը. «Այսօր Մծարայի հոգաբարձութիւնը ամբողջ ժողովրդի կամքին հակառակ ատրկանութեան միջոցով հեռացրեց դպրոցի ուսուցչին։ Թեմական իշխանութեան և տեսչի մեղաւոր և հակաժողովրդական վերաբերմունքի մասին նամակով։ Առ այժմ մեր պատասխանատւութեամբ հրապարակօրէն յայտնում ենք, որ առաջնորդի և իր գործակիցների բռնած դիրքը աւերիչ ու կործանիչ է մեր շրջանի կրթական գործի համար։ Զաքրեան, Աւդալբէկեան, Գասպարեան, Դաբբինեան, Մուսէլիմեան, Ուզունեան»։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, արդէն նախօրոշված է բարձր շրջաններում չօրինականացնել Պետական Դումայի անդամ Կարաուլովի հիմնած նոր կուսակցութիւնը, որ կոչվում է «ժողովրդական նոր կուսակցութիւն»։ Պատճառաբանութիւնը այն է՝ թէ այդ կուսակցութեան հիմնադիրներ հանդիսանում են այնպիսի անձինք, որոնք պատկանում են չը վաւերացված կուսակցութիւններին—կադէտների և առաջադիմականների կուսակցութիւններին։ Բացի այդ, ներքին գործերի մինիստրութիւնը տրամադրված է ընդունելու, որ նոր կուսակցութիւնը հետամուտ է տարածելու հակակառավարական մտքեր։

◆ Պետերբուրգում կայանալիք մահմեդական համագումարին հրաւիրված են բացառապէս աջակողմեան մահմեդականներ։

◆ Պետերբուրգի կանանց բանտում չորրորդ օրն է սովադուլ է յայտարարված։

◆ Օդեսսայում վերացվում է «Տեղեկատու բիւրօն»։

◆ Պետերբուրգում անձնասպան եղաւ կովկասեան թերթերի թղթակից Վ. Եգօրովը։

◆ Սարատովում «Սպիտակ Ծաղկի» օրը կրպակատէր Բոգոմոլովը թոքախտից մեռած կնոջ կարօտը քաշելով, մորթեց երկու զաւակներին, սրանց ընկերուհուն և մի չորրորդին, ու ինքը անձնասպան եղաւ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ապրիլի 24-ին, Գօրու գաւառի բնակիչ Դաւիթ Իմերլիշվիլիի կանթօրից անյայտ չարագործները գողացել են 150 ր. արժողութեամբ զանազան իրեր, 18 րուբլի դրամ, մի արծաթէ ժամացոյց։ Կասկածով ձերբակալվեց Թիւրքահպատակ Իվան Իվանով։ Նա իրան յանցաւոր չէ համարում։

◆ Ապրիլի 25-ին, Թիֆլիսի բնակչուհի Մարիամ Փիրալեանի տանը, որ գտնվում է Գարայեվսկայա փողոցի վրա, հրդեհ առաջացաւ, որը հանգցրեց հրդեհաշէջների խումբը։ Վնասը հասնում է 2250 ր.։

◆ Չերքէզովսկայա փողոցի № 13 տանը սպանված գտել են Սեդրակ Մնացականեանին։ Նրան սպանել են 10 ֆունտանոց կշռաքարով։ Սպանութեան պատճառները առայժմ անյայտ են։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆՈՒՄ

Ուրբաթ երեկոյեան, ապրիլի 25-ին, Գրական-Գեղագիտական Սալոնն էր հաւաքվել բազմաթիւ երկսեռ հասարակութիւն՝ հայ, ռուս և վրացի ինտելիգենցիայից, պատւելու Սալոնի անդամուհի Զարուհի Նազարեանի մահվան քառասունքի սգահանդէսը։

Ժամը $9\frac{1}{4}$-ին սգահանդէսը բացեց Բենիկ վարդապետը մի դամբանականով՝ գովաբանելով հանգուցեալին որպէս գթասեր մօր ոչ միայն իր միակ որդու, այլև բոլոր այն անձերի համար, որոնք կարիք են ունեցել մայրական հոգածութեան և անհրաժեշտ բարոյական օգնութեան։ Հայր Բենիկ իր խօսքն աւարտելով՝ առաջարկեց ներկայ հասարակութեան ոտքի կանգնելով յարգել հանգուցեալի յիշատակը և նոյնպէս ոտքի կանգնած լսել դաշնամուրի վրա նուագվելիք երաժշտութիւնը։ Վերջինս Շոպէնի նշանաւոր «Marche Fünebre»-ն էր, որ սքանչելի կերպով նուագեց Պետերբուրգի կօնսերվատորիան աւարտած և այժմս Թիֆլիսի Կայսր. երաժշտ. դպրոցի ուսուցչուհի օր. Լ. Մաղէրը։

Այնուհետև խօսեց բժշկ. Բ. Նաւասարդեան՝ շեշտելով հանգուցեալ Զարուհի Նազարեանի գովասանքը և ընդօրինակման արժանի մի աչքի ընկնող կողմը, այն է՝ հայկական օջախի աւանդներին հաւատարիմ մնալը։

Յ. Սօլովեան կարդաց զանազան տեղերից ստացված ցաւակցական հեռագիրներից (67 հատ) և գրութիւններից (66 հատ) մի քանիսը, որոնց թւում և Նախիջևան-խանի դուստր Արմէնուհից ստացված գրութիւնը, ուր յիշատակվում է այն սիրալիր հիւրասիրութիւնը, որ տարիներ առաջ մի ամբողջ ամիս վայելել է նա Զարուհի Նազարեանից վերջինիս տանը՝ Թիֆլիսում։

Դրանից յետոյ, երգեցողութեան պրոֆէսոր Բրօջի խումբէն երգեց «Pieta Signore»-ը՝ երաժշտութիւն Ստրադէլլոյի։

Տիկ. Նունէ Դօլուխանեան զգացմունքով արտասանեց Ա. Ծատուրեանի «Մայր» ոտանաւորը։

Հաճելի տպաւորութիւն թողեց օր. Ա. Հովհէլի նուագած մելամաղձիկ «Մրմունջ» յօրինուածքը ջութակի վրա։

Բժ. Բ. Ազատբեան մի քանի խօսքով թուեց նոյնպէս հանգուցեալի ունեցած առաւելութիւնները։

Դաշնամուրի նուագակցութեամբ տիկ. Հ. Ստոցկինա գեղեցիկ կերպով երգեց Լիւցցիի երաժշտութիւն «Ave Maria» աղօթքը։

Աւ. Եղիկեան նոյնպէս համառօտակի խօսեց հանգուցեալի շուրջը, որից յետոյ ջութակահար Վրոյր բաւական նուրբ կերպով նուագեց ջութակի վրա Շուբերտի «Ave Maria»-ն։

Դերասան Աղայեան աջող առոգանութեամբ արտասանեց «Սպիտակ զգեստ» ոտանաւորը։

Այնուհետև խմբեց Յ. Սօլովեան, որից յետոյ երգեցին եռաձայն Լօրգիսիանիէձէ—Ռօսսինիի «Stabat Mater»-ը, տ. Ստոցկինա և Բրօջի (դուէտ), Վրոյր և Բրօջի (ջութակ և երգ)։ Տիկ. Է. Աւանովա շատ հմտօրէն դաշնակցում էր երգիչներին և նուագողներին։

Ի վերջոյ հայր Բենիկ արտասանելով օրվայ պատշաճ իր վերջին խօսքը՝ «հոգոցով» փակեց սգահանդէսը, որ իր արտակարգ հանդիսաւորութեամբ այդ երեկոյեան թողեց ներկաների վրա խոր տպաւորութիւն։

X.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արտիստական թատրոն

Ամիրաջիի օպերէտային խմբի ներկայացումը, ապրիլի 25-ին, գրաւել էր բաւական մեծ թւով հասարակութիւն։

Տրվեց «Причуды страсти», որի մէջ հանդէս էին եկել խմբի առաջնակարգ ույժեր Գլօրեան, Տէրսկայան, Կալէնկօվան, Զելինսկին, Դալմատովը և Օրլովսկին։

Գլօրեան և Զելինսկին վարպետօրէն պարեցին տանգօ։

Այսօր տրվելու է «Պոպլիկը»։

Յայտնի օպերէտային երգչուհի Վ. Մ. Շուվալօվա ժամանելով Թիֆլիս, վաղը, երկուշաբթի, տեղի կունենայ երգչուհու առաջին դեբիւտը։ Կը խաղացվի «Фея Карлсбада» օպերէտը։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Б. Ишханянъ. Экономическія и общественныя основы армяно-грузинскаго антагонизма. Изданіе книжн. магазина „Гуттенбергъ“ № 85, Тифлисъ, 1914 г., ц. 40 коп.

Հայ-վրացական յարաբերութիւնների վերլուծման խնդիրը միանգամայն ճիշդ տեսակէտի վրա է դրել հեղինակը։ Յարաբերութիւնների սրութիւնը երկու ժողովուրդների միջև արդիւնք է տնտեսական այն տարբեր մակերևոյթների, որոնց վրա հանդէսում են մէկը և միւսը հասարակական վերնաշէնքերը։ Անտագոնիզմը, պայքարը երկու ժողովուրդների տիրող դասակարգերի միջև պէտք է ընդունել որպէս իրողութիւն, սակայն օբիեկտիւ վերաբերմունքը միայն կարող է պարզել նրա պատճառները։

Միանգամայն օբիեկտիւ վերաբերմունք ունի Իշխանեանը ներկայ խնդրում։ Անտագոնիզմի պատճառները ըստ հեղինակի հետևեալներն են. Վրացիների տիրող դասակարգը՝ ազնուականութիւնը, որպէս քայքայվող տարր, գնում է դէպի անկում. կապիտալիզմը այն գլխաւոր գործօնն է, որ արագ տեմպով արշաւում է ֆէօդալ-ազնուականութեան վրա, կազմալուծելով նրա կառուցուածքը, տարաշխելով նրա ընդարձակ հողերը և այլն։ Հայերի տիրող դասակարգը՝ բուրժուազիան է, ուստի և կապիտալիստական այդ արշաւի մէջ խոշոր դեր խաղացողը և վրաց ազնուականութեան անկման նպաստողը հայ խոշոր բուրժուազիան է։ Այսպիսով իրար դէմ լարված յարաբերութիւնների պատճառը պիտի որոնել այդ երկու հակոտնեայ դասակարգերի հակադիր շահերի, այլ ոչ երբեք հայ և վրացի ժողովուրդների միջև, որպէս ամբողջութիւնների։

Վրաց ազնուականութեան փայփայած աւատականութիւնը այսօր իր բնական անտեսութեան շրջանակով մի յետադիմական երևոյթ է կապիտալիստական կուլտուրայի հանդէպ։ Իրերի դրութեամբ նա պէտք է ընկնի, անյայտանայ. ազնուականութեան հողերը, կալուածները պիտի անխուսափելիօրէն անցնեն կապիտալիստների ձեռքը. մանաւանդ այդ բանին խոշոր չափով նըպաստում են ազնուական դասի կեանքի աճող պահանջները։

Դէպի անկումն գնացող ազնուականութիւնը ներկայումս վրաց իրականութեան մէջ այն տիրող սօցիալական տարրն է, որ իր իդէօլօգիայով «ազգ ու ազգութիւն» է տալիս ողջ ազգային կեանքին։ Ուստի երբ վրաց մամուլը իր ազգերիկ մասով արշաւանք է սկսում հայ բուրժուազիայի դէմ յանուն որպէս թէ վրաց ազգի անձեռնմխելիութեան և ընդհանուր շահերի, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ քայքայվող ազնուականութեան ճիչը, աղաղակը։ Իր դասակարգային խոստանվող դրութիւնը այդ իդէօլօգիան կապում է ամբողջ վրաց ժողովրդի վիճին, նոյն իսկ գիւղացիութեան, որի շահերը միանգամայն հակադիր են հողային արիստօկրատիայի շահերին։

Ազնուականութեան շօվէն մամուլը աւելի այժմ է սատարում վրաց մանր-բուրժուական յետադէմ նացիօնալիզմին. վերջինս այն հասարակական տարրն է, որ իրերի դրութեամբ միշտ ուժեղի կողմն է թեքվում։ Վրաց մանր-բուրժուազիան նեղվում է խոշոր կապիտալից ոչ պակաս, քան ազնուականութիւնը, ուստի և նա ևս հայ բուրժուազիայի դէմ զինվում է այնպէս, ինչպէս ազնուականութիւնը։

Արդ, հայ-վրացական անտագոնիզմի հիմնական պատճառները զուտ տնտեսական են և շահագրգռված կողմերից մէկը վրաց ազնուականութիւնն է, միւսը՝ հայ բուրժուազիան։ Մէկը պատմական անհրաժեշտութեան դէմ արհեստական միջոցներով իր աւելորդ գոյութիւնը պահպանելու ճգտող է, միւսը իրերի դրութեամբ տնտեսական զարգացման թափի արտայայտիչն է։

Մեզ թւում է սակայն, որ վրաց ազնուականութեան և հայ բուրժուազիայի փոխադարձ յարաբերութիւնների մէջ՝ պակաս դեր չը պիտի խաղայ առաջայայում նաև Թուրք-Թաթար ազնուականութիւնը։ Կարծում ենք, որ վերոյիշեալ ազնուականութիւնները, ունենալով միևնոյն շահերը, առաջայայում պիտի ձգտեն համերաշխ գալ միևնոյն կազմակերպութեամբ և միահամուռ ոյժերով պիտի պայքարի մէջ մտնեն ընդդէմ կապիտալիզմի առ հասարակ և հայ բուրժուազիայի դէմ մասնաւորապէս։ Եւ որովհետև իւրաքանչիւր ժողովրդի սօցիալական տիրող դասը իր դասակարգային ձգտումները ամեն կերպ ճգնում է ընդհանուր ազգային համարել, ուստի անկասկած է, որ Թուրք-վրացական ֆէօդալիզմի պայքարը ընդդէմ հայ բուրժուազիայի պիտի համարվի Թուրք-վրացական և հայկական ազգային պայքար։

Այս հարցի շուրջը Իշխանեանը ունի մի քանի ակնարկներ, բայց կանգ չէ առել այդ հարցի վրա ըստ էութեան։

Իշխանեանի այս գրքում գտնում ենք մի պակասաւոր գիծ. ընդգծելով կապիտալիզմի մի երեսի «հրաշալիքները»՝ չէ կարելի ոչ մի պարագայում առանձնապէս չընդգծել նրա միւս երեսի բազմաթիւ չարիքների շարքը։ Ճիշդ է, անխուսափելի են թէ մէկը և թէ միւսը, բայց անհրաժեշտ է առաջինի հետ անպայման յիշել նաև երկրորդը։

Իշխանեանի այս աշխատութիւնը անպայման ունի իր խոշոր արժէքը, և ցանկալի է, որ նա թարգմանվէր ու հրատարակվէր նաև հայերէն առանձին գրքով, միայն մեր վերևը յիշած շատ անհրաժեշտ լրացումներով։

Ռուսերէն ներկայ հրատարակութիւնը ունի բաւականաչափ վրիպակներ, բայց լեզուն ընդհանուր առմամբ պէտք է միանգամայն բաւարար համարել։

Սուրխաթեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Փոքրիկ հերոսներ», Էդմոնդօ դէ Ամիչիսի, թարգմ. Ս. Ս.-ի, Վաղարշապատ, 1914 թ., էջ 19, գ. 7 կ.։ 2) «Այգեպանի մօտ», Սօֆիա Գալչեանի, Թիֆլիս, 1914 թ., էջ 38, գ. 10 կ.։ 3) «Տաճար» կիսամսեայ հանդէսի № 5, Կ. Պոլիս, 1914 թ.։ 4) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 12 և 13, Նիւ-Եօրք, 1914 թ.։ 5) «Արարատ» ամսագրի № 3, Էջմիածին, 1914 թ.։ 6) «Հանդէս Ամսօրեայ» № 1, Վիեննա, 1914 թ.։ 7) «Պատանի» ամսաթերթի № 1, Թիֆլիս, 1914 թ.։ 8) «Հասկեր» ամսագրի № 3—4, Թիֆլիս, 1914 թ.։ 9) «Երկունք» ամսաթերթի №№ 8 և 9, Կ. Պոլիս, 1914 թ.։ 10) «Կայծ» ամսաթերթի №№ 6, 7—8, Կ. Պոլիս, 1914 թ.։ 11) «Բողբոջ» ամսագրի №№ 1 և 2, Մարզուան, 1914 թ.։ 12) «Լոյս» ամսաթերթի №№ 8, 9 և 10, Վան, 1914 թ.։ 13) «Ղարադաղ» ամսագրի № 1, Թաւրիզ, 1914 թ.։ 14) «Տաճար Մանկանց» ամսագրի №№ 1—2 և 3, Կ. Պոլիս, 1914 թ.։

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղցկեղ հիւանդութեան նոր բուժում.—Մոսկվայի համալսարանի վիրաբուժական կլինիկայի աւագ ասիստենտ դր. Վ. Պ. Զավեդէեվ, մարսողութեան օրգանի քաղցկեղի բժշկութեան աջող փորձ արաւ այս օրերս, գործադրելով մի նոր միջոց, որը կոչվում է՝ էլէկտրօ-սելէն։ Հիւանդը մի հասակաւոր մարդ էր. բժշկութիւնը սկսվեց այս տարվայ մարտից։ Մարսողութեան քաղցկեղը հասել էր իր զարգացման գագաթնակէտին։ Ուռոյցքը բոլորովին փակել էր ստամոքսի մուտքը, այնպէս որ նրա չէր թողնում ոչ մի տեսակ ուտելիք, բացի թէյից և ջրից։ Հիւանդը կլինիկայում բազմիցս ենթարկվեց զանազան տեսակ քննութիւնների, մինչև անգամ ռենտգենեան ճառագայթների, և բացի այդ պրոֆ. Զիկովի քաղցկեղի ինստիտուտում ենթարկվեց առանձին քննութեան։ Բոլոր դիտողութիւնները յանգում էին հիւանդի մօտալուտ մահվան անխուսափելիութեան։ Սելէնի գործադրութիւններից յետոյ հիւանդը նորից քննութեան ենթարկվեց բազմաթիւ բժիշկների հսկողութեամբ։ Քննութիւնը պարզեց, որ նախկին քաղցկեղային ուռոյցքը չքացել է և որ հիւանդը սկսել է առողջանալ։ «Новое Время»-ի աշխատակցի հարցերին, բժիշկ Զավեդէեվ պատասխանեց՝ բացատրելով հետևեալը.

—Ես մօտենում եմ այն կարծիքին, որով հաստատվում է, որ քաղցկեղային հիւանդութիւնները պէտք է համարել տեղական բնոյթ չունեցող հիւանդութիւններ, այլ ընդհանուր։ Այդ պատճառով, ինքս լինելով վիրաբոյժ, ես սակայն համարում եմ, որ օպերացիային բժշկումը (նոյնպէս ռենտգենեան ճառագայթներով և ռադիով բժշկելը) որոշ չափով օգտակար է միայն արտաքին հիւանդութիւնների համար։ Իսկ ներքին ուռոյցքների համար (առանձնապէս մարսողութեան քաղցկեղի) բոլոր այդ միջոցները թերի են։ Այդ նկատումով էլ ես փորձ արի հիւանդի արիւնատար երակի մէջ էլէկտրօ-սելէն սրսկել։ Սելէնն աչքի է ընկնում նրանով, որ գործում է «ընտրողաբար» քաղցկեղային վանդակների վրա և, տարրալուծվելով նրանց վրա, վերջնականապէս ոչնչացնում է նրանց։ Առողջ մըկանների վրա սելէնը բոլորովին չէ տարրալուծվում։ Իսկ քաղցկեղային վանդակները քայքայվում են, օրգանիզմի որ մասում էլ լինեն նրանք։ Առաջին լուրջ փորձը, որի համար ես փոխեցի արտասահմանում իմ ընդունված դօզերովկան, անպայման աջողվեց։ Հիւանդութեան ժամանակամիջոցում արվեց ընդամենը վեց սըրսկում, և այն մարդը, որին շաբաթ ու կէս ժամանակ էր մնացել ապրելու, արդէն ոտքի վրա է և կերակուրներ է ընդունում։ Հիւանդութեան կրկնութիւնից երկիւղ կրելու հիմք չը կայ։ Ներկայումս ես յաջորդ փորձերն եմ անում սելէնով (առայժմ ոչ մարդկանց վրա), աշխատելով սելէնը ենթարկել ռենտգենեան ճառագայթների ներգործութեան։ Հնարաւոր է, որ այս լինի քաղցկեղը բուժելու նոր միջոցի կատարելագործութիւնը։

ՄԱՄՈՒԼ

Մեբուսական խնդիրը Թիւրքահայերի համար մի կատարեալ պատուհասային խընդիր է դարձել։ Նա պատճառ եղաւ, որ նոյն իսկ այնքան մեծ գովաբանութիւններով հռչակված միջկուսակցական համերաշխութիւնը քայքայվի։ Դաշնակցութիւն կուսակցութիւնն անզօր գտնվեց կամ չը կարողացաւ յարգել տալ իր ընդունած որոշումը և նրա անհնազանդ ճիւղերը, իրանց արարքը արդարացնելու համար, առաջ քշեցին ապակենտրոնացման գաղափարը Թիւրքահայ մամուլի մէջ, ի բաց առեալ դաշնակցական թերթերը. չը կայ մի օրգան, որ չը դատապարտի Դաշնակցութեան վարմունքը։ Նոյնիսկ Եգիպտոսի «Յուսաբեր» թերթը, այնքան ներողամիտ և բարեացակամ դէպի դաշնակցականները՝ զրկված համերաշխութեան գաղափարից, չէ կարողանում ծածկել իր դժգոհութիւնը։ Գաւառական մամուլի օրգաններից, ահա ինչ է գրում Զմիւռնիայի «Դաշինք» թերթը։

Մեբուսական խնդրոյն հանդէպ Դաշնակցութեան վերջին դիրքը, բայց ի՛նչ գրենք, այս բացարձակ, այս դատապարտելի ստամբուն դէմ, որուն ինքզինքը կը նետէ հայ քաղաքական կուսակցութիւն մը։

Դաշնակցութեան գործածած միջոցը պատուհ կը բերէ անշուշտ իր համբաւեալ պրեստիժին, և եթէ միամտութիւնը ունենանք հաւատալու Դաշնակցութեան կեղծաւորութեանը, պէտք է լուծեալ հռչակէ ինքզինքը այդ կուսակցութիւնը, որ ոչ միայն հայ ժողովուրդին մէջ իր պրեստիժը չի կրնար պահել, այլ առաւել ևս իր կուսակցական կարգապահութիւնն ալ պահպանելու ի վիճակի չէ։

Դաշնակցութեան՝ իր յանձնարարութեան չյարգելուն համար մէջ բերած պատճառը, թէ իր գաւառի մասնաճիւղերը ապակեդրոնացեալ են և այլն... Այդ պարզները այլ ևս ինքզինքնին կրնան խաբել, որովհետև ոչ ոքին անծանօթ է, թէ Դաշնակցութիւնը խստօրէն կեդրոնացեալ կուսակցութիւն մըն է և թէ՝ հիմնական տեսակէտէ տարբերութիւն չըլլար գաւառական մասնաճիւղերու և կեդրոնին տեսակէտին մէջ։

Իրաւ հասկնանք, բայց մանաւանդ չը խաբենք, պարոններ։

*

Թիւրքահայոց ազգ. ժողովի դաշնակցական ֆրակցիայի գործ դրած ջանքերը, որ Օրմանեան սրբազան հրաժարվի կրօնական ժողովի անդամութիւնից, առիթ է տուել «Բանբեր» թերթին հետևեալ նկատողութիւնը անել.

[illegible] դաշնակցական երեսփոխաններու այն ցանկութեան, թէ նախկին պատրիարք Օրմանեան սրբազանը հրաժարի կրօն. ժողովէն, ինչպէս զաւեշտական ալ է, կը խորհիմ հիմա։ Որովհետև ոչ մէկուն համար գաղտնիք մըն է թէ—կրօն. ժողովի պարագան մէկ կողմ թողլով, որովհետև դաշնակցականները իրենք յայտարարած են արդէն քանիցս, թէ կրօնական հարցերու հետ գործ չունին—խառն ժողովը կը բաղկանայ 28 անդամներէ, որոնց միայն մէկ անդամը պիտի ըլլայ Օրմանեան սրբազանը և միայն մէկ ձայն պիտի ունենայ ժողովին մէջ։ Արդ, ինչո՞ւ այսքան երկիւղ դաշնակցականներուն մօտ նախկին պատրիարքին հանդէպ. այս վերջինին ձայնը որքան ալ ազդեցիկ ըլլայ, կրնայ խեղդուիլ այն միւս ազդօգուտ ձայներուն մէջ, որոնք պիտի ըլլան մնացեալ 27... խոչընդոտները։ Դաշնակցութիւնը կընդունի որ մէկ Օրմանեան սրբազան հաւասար է 27 եկեղեցական և աշխարհական անդամներու, որոնց մէջ անշուշտ Դաշնակցութիւնը իր համակիրներն ալ կրնայ ունենալ։

Եթէ կընդունի, թող յայտարարէ հրապարակաւ, որպէսզի ըստ այնմ հարկ եղած պատասխանը տանք իրեն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարիզ, 30 ապրիլ (ն. տ.)

Դեռ շատ կանուխէն պէտքը զգացուած է, Պարիզի հայ ուսանողութեան մէջ, բարոյական կապի մը, որուն շուրջ բոլորուէին հայրենիքէն ժամանակաւորապէս հեռակայ ուսանողները։ «Պարիզի Հայ Ուսանողական Միութիւնը» արդիւնքն է այդ պահանջքին։

Իր երկարամեայ գոյութեան ընթացքին Միութիւնը ունեցած է ի հարկէ իր փայլուն շրջանը, ունեցած է սակայն երկար ժամանակամիջոց մը, ուր բազմազան պատճառներ—ընդհանրապէս անցական միջավայրի արդիւնք—արգելք դարձած են անսայթաք, լայն և արդիւնաբեր գործունէութեան մը։ Տարիներու անցնելով սակայն, հիներուն քով աւելցած են նաև, դեռ ևս անտեսուած այլև տնտեսական պահանջքներ։

Ուրախութեամբ կը յայտարարենք հիմա, որ Միութիւնը խրատուած հին սխալներէ՝ կանոնաւոր վերակազմութեան մը ձեռնարկեց, որուն արդիւնքը ցցած կերպով մէջտեղ ելաւ, ամենակարճ ժամանակի մէջ։ Դասախօսութիւններու շարք մը սկսուեցաւ, որոնք ապաստանեցին աւելի խանդավառութիւն յառաջացուցին. Միութեան գրադարանը օրէ-օր ճոխանալու վրայ է, և ընթերցասրահին մէջ միշտ կը բազմանան օրաթերթերն ու պարբերականները։

Ամենէն վերջ Միութիւնս կը տօնէ անոր իր 25-ամեայ յոբելեանը։ Հանդէսը տեղի պիտի ունենայ 16 մայիս 1914 թ., Պարիզի ամենէն շքեղ սրահներէն մէկուն՝ «Salle des Ingénieurs civils»-ի մէջ։ Ոչ մէկ ջանք խնայուած է, որպէսզի փայլուն անցնի յոբելեանը։ Միութեան կողմէ պիտի խօսի նախագահ պ. Աղէքսանդր Բարսեղեան և պ. Արշակ Չօպանեան այս անգամ ևս կը բերէ իր մասնակցութիւնը. պիտի ներկայացուի Յ. Պարոնեանի «Բաղդասար աղբար» կատակերգութիւնը, մենախօսութիւն և օրհներգներ տեղի պիտի ունենան հայ արուեստագէտներէ։

Ներկայ յայտարարութեամբ կը հրաւիրենք բոլոր այն անձերը, որոնք Միութիւնով կը հետաքրքրուին, և բոլոր հին ընկերները, որպէսզի ձայն տան առաջադրուած ձեռնարկին։

Ի դիմաց Ուս. Միութեան վարչութեան՝
Նախագահ՝ Աղ. Բարսեղեան
Ատենադպիր՝ Միհրան Փափազեան

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 20 ապրիլի

«Մեղու» աշխատանքի տան վարչութիւնը ստացել է մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանի միջոցով տ. Ն. Միրաքեանից յօգուտ ընկ. 20 ր., որի համար վարչութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Վարչութիւն

Թիֆլիս, 26 ապրիլի

Հայ որբերին ձրի ուսում տուող «Լոյս» ընկ. վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում օր. օր. Նատալիա և Սօֆիա Միրզոյեանցներին, որոնք իրանց եղբօր՝ Յովհ. Միրզոյեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն նուիրեցին 25-ական ր. «Լոյս» ընկերութեանը, ընդամենը 50 րուբլի։

«Լոյս» ընկ. վարչ. փոխ-նախագահ՝
Խորէն ք. Խուցեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 3 ապրիլի

Կիլիկիոյ կարևոր կեդրոններուն մէջ դպրոցական տարին յաջող չանցաւ։

Մերսին, տարեվերջին 2—3 ամիս մնացած, ոչինչ բաներով անհամաձայնութիւն մը ծագեցաւ հոգաբարձութեան և տնօրէնութեան միջև, և վերջինս դադրեցաւ դպրոցը յաճախելէ։ Այս անտեղի միջադէպը թէև հոգաբարձութեան և տնօրէնին համար վերջացաւ (առաջինը յաջողելով տնօրէնը հեռացնել տալ և տնօրէնն ալ՝ իր ամբողջ թոշակը գանձել), սակայն բնական է թէ խորհող մը չեղաւ դպրոցին և աշակերտութեան համար, որ այսպէս ամուլ շրջան մը կանցնէ և իրենց նկարագրին վրայ գէշ ազդող և անձնականութիւններէ ծնած տխուր երևոյթներու հանդիսատես կըլլայ։

Բայց ո՞վ, դպրոցը և աշակերտութիւնը խորհող։

Ադանան ևս նոյն վիճակը կը ներկայացնէ։ Հոն ալ, կըսուի թէ, ազգային իշխանութիւնը, նկատելով որ տնօրէնը ներկայ շրջանին մէջ քանիցս ձգելով դպրոցը, շաբաթներով, Պոլիս գացած է, ծանր դիտողութիւնք ուղղած է հոգաբարձութեան, և միտքերու մէջ տարաձայնութիւնք ծագած են։

Ինչպէս Ադանա, նոյն և Սիս ու Մերսին, խելահասները փափագ կը յայտնեն դպրոցնին Միացեալին յանձնել, որ ամբողջ ծախքը իրենք հոգալով հանդերձ (այսինքն տեղացիք) Միացեալը ստանձնէ վարչական ղեկը։ Ինչպէս կը տեսնուի, տեղական վարչութիւնքը անընդունակ կը հանդիսանան կանոնաւոր գործ մը ընելու և յարատևելու, և հարկ կըլլայ փնտռել Միացեալը, որ իր սուղ միջոցներովն անգամ յաջողած է կանոնաւոր և սիստեմատիկ ուղղութիւն մը գծել իր վարժարանաց համար։ Դիտող

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Գեներալ ֆօն-Սանդերսը Կ. Պօլսից այս օրերս մեկնելու է Բեռլին։

✦ Եապոնական լրագիրները նախազգուշացնում են կառավարութեանը, որ ռուսաց զինուորական մինիստր Սուխոմլինովի Հեռաւոր Արևելք այցելելու նպատակն է՝ գլուխ բերել ռուսական զինուորական ոյժը Արևելքում իրականացնելու նախագիծը։

✦ «Веч. Вр.» ի թղթակիցը հեռագրում է Կ. Պօլսից, որ թիւրքերի գնած բրազիլեան դրեդնօուտը Դարդանէլ է բերվելու երեք շաբաթ յետոյ. պակաս մասերը լրացվելու են ճանապարհին։

✦ Նէապոլում ցուցարարները ներս են խուժել աւստրօ ունգարական հիւպատոսարանը և «կորչի Աւստրիան» աղաղակներով ջարդել են պատուհանները ու կահ-կարասիքը։ Ցուցարարներին առաջնորդում էին պրօֆեսօրներ և պատգամաւորներ։

✦ Միացեալ Նահանգների շատ քաղաքներում տեղի են ունենում սօցիալիստական ցոյցեր յայտնի միլիարդէրներ Ռօկֆէլլէր որդու և հօր դէմ, համարելով նրանց Կոլօրադօյում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի պատճառ։ Ռօկֆէլլէրները, ինչպէս հաղորդում են, փախել են իրանց ամրոցից։

✦ «Times»-ին հեռագրում են Պեկինից. «Չին զինուորները Խալխի սահմանում բարեկամաբար հրաւիրեցին մօնղոլական մի զօրամասի, թւով մօտ 100 հոգու, մանել իրանց բերդը։ Բայց հէնց որ մօնղոլները երևացին պատերի տակ, չորս կողմից սկսվեց գնդակահարութիւն, 30 մօնղոլ կարողացան փախչել, մնացածները սպանվեցին։ Մօնղոլներին առաջնորդող անձանց չինացիք տարան Խալգան և հրացանի բռնեցին՝ հաւանօրէն զինուորական իշխանութիւնների կարգադրութեամբ։ Այս միջադէպը լուրջ տարաձայնութիւն է առաջ բերելու Մօնղոլիայի և Չինաստանի միջև»։

✦ Մայիսի 15-ին Բեռն քաղաքում բացվում է արտասահմանում ուսանող ռուս ուսանողների համաեւրոպական առաջին կօնֆերէնցիան։

✦ «Vos Zeit.»-ի Կ. Պօլսի թղթակցի գրելով, օրէ-ցօր Բօսֆօրի ափերում սաստկանում է հակագերմանական տրամադրութիւնը։ Ֆրանս-թիւրքական մերձեցման կօմիտէտները մեծ աջողութեամբ գործում են։ Գերմանիայի ազդեցութիւնն ընկնում է։ Հակագերմանական ծրագրով գործում է կաբինէտի ազդեցիկ անդամ Ջէմալ-բէյը։

✦ Նոր Սերբիայում ալբանական լուրջ ապստամբութիւն է։

✦ Ինչպէս հաղորդում են, Կ. Պօլսի գերմանական դեսպանը սպառնացել է մեծ վէզիրին, որ Գերմանիան կը դիմէ ագրեսիվ քաղաքականութեան, եթէ Թիւրքիան, հակառակ իր խոստումներին, չը տայ ծովային պատուէրների կէսը Գերմանիային, որպիսի պատուէրները տրվել են Ֆրանսիային։

ԽԱՌԸ ԼՈՒՐԵՐ

Ապագայի աէրօպլանը. - Ամերիկացի օդաչու Վիլբուր Րայտ իր մահից յետոյ թողել է մի կտակ ապագայի օդաչուներին, որի մէջ ցոյց է տալիս, որ ժամանակակից աէրօպլանների կազմութիւնը շինված է սխալ հիմքի վրա։ Կտակի մէջ Րայտը առաջադրում է ապագայի թռչող ապարատի սկզբունքները։ Մեր աէրօպլանի գլխաւոր տարրերից մէկն է՝ պրօպելլէրը, որ ապարատը շարժման մէջ է դնում. ապագայ ապարատի մէջ դա միանգամայն գոյութիւն չի ունենալու։ Պրօպելլէրը կը փոխարինվի կողքերի թևերի շարժողութեամբ միջատների թևերի շարժողութեանը համապատասխան։ Րայտ իր միտքը հիմնաւորում է միջատների և թռչունների թռիչքի դիտողութիւնների վրա։ Նա գալիս է այն եզրակացութեան, որ թռչունների և միջատների թևերը ծառայում են թռչունին՝ բացառապէս նրան առաջշարժութիւն տալու։ Հէնց որ շինվի նոր ձևի օդաթուիչք ապարատը, որի համար թևերը շարժողութեան աշխատանք կը կատարեն, այն ժամանակ իսկապէս մարդը կը դառնայ օդի տէրը։ Նոր աէրօպլանը, խիստ արագութիւն զարգացնելու հետ միասին, կարող կը լինի և դանդաղօրէն շարժվել և տարածութեան մէջ բոլորովին կանգնել։ Օդաչուների ամբաղդութեան դէպքերը անցեալի գիրկը կանցնեն, որովհետև ամեն մի ապարատ օժտված կը լինի պարաշիւտի առանձնայատկութիւններով՝ ցած կիջնի բաւականին դանդաղ և անվնաս։ Նոր մեքենան ամուր և դիմացկուն է լինելու ամեն տեսակ եղանակի ժամանակ, նոյնիսկ շատ խիստ քամիներին։ Հանգուցեալի եղբայր Օրվիլ Րայտ միանգամայն համամիտ է իր եղբօր հայեացքներին և մտածում է նոր տիպի ապարատ շինել։

Տարօրինակ կտակ. — Բօբօնէում մի Մացուկէլլի իր կտակով մի քանի հազար լիր թողել է գերեզմանոցի դռնապանին, որպէսզի սա լուանայ նրա գերեզմանը տաք ջրով ու օճառով։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բայց և այնպէս, ամենից սիրուն Գօնակօ գուլպի արօմատն է։

—o—

Դուխի Օդէկօլօն
Պուդր Սապօն
ԳՕՆԱԿՕ
Ընկ. Ս. Չէպէլէվեցկի
եւ Որդիք
ՄՕՍԿՎԱ

(27, մ. 1) (M. 137893) 3—2

Լոյս տեսաւ
«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»

պարզ և հասկանալի լեզւով ամեն մարդու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որտեղ չը կայ բժիշկ և դեղատուն։ Ամեն տեսակ պատահական փորձանքներ և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղարանով և բացատր. լթիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև--«Վեներական ախտերի եւ ծածուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ ռեցեպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Ծիծաղի տկճար», անէկդօտներ։ Գինը 20 կ.։ «Անիկարմաշի շալվար», փօղըվիլ։ Գինը 20 կ.։ «Րաֆֆի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Միննոյն դադարում» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկաներով առաջուց ուղարկել։

(հ. կ.) 327. 100—5

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ մայիսի 4-ին նշանակված է աճուրդ ամառվայ սէզօնի համար, բոտօնդայի նորակառոյց և անտառի բուֆէտների համար։ Ցանկացողները հրաւիրվում են մասնակցելու աճուրդին յիշեալ օրը բանաւոր և փակ ծրարներով։ Խորհուրդ

(օ. մ.) 368. 4—2

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժեներ Գ. Ջ. Եարալեան և Ընկ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, 9, սեփ. տ.
Տնօրէնի տէլէֆօն № 9, Կառավարչի բնակարան 14—78.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԼՐԻՒ ՍԱՐՔԱՒՈՐՈՒՄՆ

Գիդրօ-շոգե-նաւթա-էլեկտր. կայարանների՝ առանձին աւտօմատիկ յարմարութիւններով, որոնք ազատում են կայարանների վերաբերմամբ ունենալիք հսկողութիւններից։ Ջրհան, սառցային, սառոյց պատրաստող, փոշեմաքրիչ, ջրաբաշխական կայարանների։ Վերանորոգումն և սարքաւորումն ջրաղացների, փայտասղոցարանի, բամբակազտիչ, ձիթահան և այլ պատրաստող գործարանների։ Կատարելագործված վերելակների՝ մարդկանց և ապրանքների համար։ Կառուցում է—շարժիչներ և մեքենաներ բոլոր տեսակի տեխնիկ. և գիւղատնտես. նպատակների համար։ Կատարում է—ամեն տեսակ կաթսայի, կամուրջային և այլ մետաղային աշխատանքներ։ Պատրաստում է—արտասահմանեան ֆիրմաների նորագոյն ձևերով չքեղ զարպաններ, ցանկապատեր, պատշգամբներ, բակեր և այլն։ Նախագծեր և նախահաշիւներ բոլոր մասնաւորված աշխատանքների համար։

(կ.) 175. 25—6

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ.
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԷՐՋԵԱՆԻ
Այս նոր ձեռնարկը կոչվում է
«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՂԱՔՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ»

Այս նոր Ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիպնօզացնել, ներշնչել և սովորել Նոր-Հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր Ձեռնարկի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պէտք դիմել նամակով հետևեալ հասցէով.

Ռուսաստանից—Арутюну Шекерджянъ, Вельяминовская ул. № 22 Тифлисъ Արտասահմանից—Haroutun Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(կ.) 193. 25—8

КАХЕТИНСКІЯ ВИНА
Т-ВА КАХЕТИНСКИХЪ САДОВЛАДѢЛЬЦЕВЪ
„Алаверды"
Цинк. С.С.
ТИФЛИСЪ
ПУШКИНСК. УЛ. КАРАВАНЪ-САРАЙ ТАМАМШЕВЫХЪ
ТЕЛЕФОНЪ 17-61

10—4 (ն.է.կ.)

ՄԱՐՄԱՐԷ-ՄՕԶԱՅԻԿ և ԱՐՁԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
Բ. Պ. ՎԻԼԼԱՅԻ
Թիֆլիս, Միխայլօվսկի պր., № 63, սեփական տ.։ Տէլէֆօն 6—20.
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
մարմարեայ, քարէ եւ մօզայիկ աշխատանքների համար։
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
պատրաստի արձաններ լաբրադօրից և տեղական կարրարեան մարմարից։
Ծեփումն շինութիւնների ֆասադի - արհեստական քարով

(չ.ու.կ.) 271. 10 - 6

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ
№ 4—ապրիլ 1914 թ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1) Ազատութեան արշալոյսին (վերջ)—Արա-ս, 2) Բաբա Թահէր—թարգմ. բնագր. Ց. Զ. Միրզայեան, 3) Իմ բարեկամները—Վ. Պետրոսեան, 4) Երգչի վիշտը (բանաստ.)—Յովհ. Թումանեան, 5) Նորան—Գ. Մեսեան, 6) Կինը—Լէյլի, 7) Քաղցածներ—Ռէն, 8) Յուշեր Տաճկա. Հայաստանի ճանապարհորդութիւնից—Ա-Դօ, 9) Քննադատական փիլիսոփայութիւն (Կանտի կեանքը և անձնաւորութիւնը)—Ե. Ֆրանգեան, 10) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 11) Աշխարհաբարը և աշխարհիկ գրակ. մինչև Խ. Աբովեան—Մար. Յարութիւնեան, 12) Ալֆրէդ Ռօլլէն—Աւետիք Տէր-Պօղոսեան, 13) Գրախօսութիւն. ա) Ատոմ Եարճանեան (Սիամանթօ) Սուրբ Մեսրոպ (Կովկասեան հրատ.)—Մ. Յար., բ) Արմենուհի Տիգրանեան (Մենուհի) Բանաստեղծութիւններ՝ Ն. Աղբալեան, գ) Գ. Մեսեան—Քաոր Գաբրիէլը—Und Doch, դ) Գ. ք. Գորգեան՝ Կարկուտ—Und Doch, 14) Վրաց կեանք—Բ.-Տ, 15) Թիւրքիա—Տաճկական ռէֆօրմները—Ռուբէն, 16) Նամակներ Պարսկաստանից. Պարսկաստանի զինուորական ուժերը—Ֆարրօ, 17) Աշխատաւորական կեանք—Գերմանիա, Անգլիա և Հօլլանդիա—Ան. Փանոսեան, 18) Բովանդակութիւն, 19) Ցանլուած. Չեսար Լօմբրօզօ—Հանճար և Ցնորումն, իտալերէն բնագր. թարգմ. Ց. Ճերմակ, 20) Պատկերներ. 1) Էմմանուէլ Կանտ, 2) Ալֆրէդ Ռօլլէն և 3) Չեսար Լօմբրօզօ։

Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».

(հ. կ.) 366. 3—2



ԱՇԽԱՐՀԱՑԱՆՈԹ
ԿՐԵՄ
ՎԱԶԻՄԻ
ՄԵՏԱՄՈՐՖՈԶԱ

Միակ ճանաչված ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ կանանց կողմից։ Անպայման արմատապէս հեռացնում է երեսի բծիկները, բշտիկները, մօնները, այրուածքները, կնճիռները և այլ դեֆէկտները։

(П. 44116) 5—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմեօնօվսկայա, № 16.

(չ.ու.կ.) 804. 100—84

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.

Ներքին և երեխաների հիւանդ., մանաւանդ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեկտրօթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։

Տէլէֆօն № 388.

(ա. օ.) 112. 100—55

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (Erlich-ի 606 եւ 914-ով) միզասեռական, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։ Էլէկտրաբուժութիւն։
Ընդունե- ($12\frac{1}{2}$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փող.), տելեֆօն 11—75.

(չ. կ) 785. 100—68

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՋԻԼԻՆ"

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ, համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է տուփիկին։ Իսկականը միայն արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։ Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը։

ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Վաճառվում է բոլոր դեղատներում և դեղավաճառ խանութներում։

Salo—ՊԻՋԻԼԻՆ

(կ.) (П. 57780) 37 2

„ԳԻՐ" ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Սիմէօնեան. «Մեղրատու բոյսեր»	30 կ.
» «Ձեռնարկ գործնական բանջարաբուծութեան»	60 կ.
» «Ձեռնարկ թռչնապահութեան»	25 կ.
» «Խոտաբուծութիւն»	20 կ.
«Պտղատու ծառերի թշնամիները»	35 կ.
Քիշմիշեան. «Նախագիտելիք բուսաբանութեան»	80 կ.
Խան-Աղեան. «Գիւղատնտեսական գործիքներ և մեքենաներ»	50 կ.
Պետրոսեան. «Ինչպէս բամբակը մշակել»	15 կ.
Ջելինսկի. «Բամիա»	05 կ.
Աթանասեան. «Բամբակը և նրա մշակութիւնը»	40 կ.
Պօտեխին. «Մեղուաբուծութեան ձեռնարկ»	75 կ.
Մելիք Շահնազարեան. «Վազի մշակութիւնը»	1 ր. —
» » «Գինեգործութիւն»	1 ր. —
Ղազարեան. «Անասնապահութիւն և կաթնատնտեսութիւն»	40 կ.
«Ուղեցոյց գիւղացի կօօպերատօրին»	25 կ.
«Կօօպերացիայի մասին»	25 կ.
Աչէրօն. «Գիւղատնտեսական հրատապ հարցեր»	20 կ.
Մելիք-Շահնազարեան. «Ռուսահայերի գիւղատնտեսութեան վիճակը»	15 կ.
Ղազարեան. «Դաբաղ կամ կճղակի և դնչի վարակիչ հիւանդութիւն»	10 կ.
» «Կենդանիների վարակիչ հիւանդութիւնների մասին»	08 կ.
Ադոնեանց. «Նամակագիրք օտար աղբիւրների հետևողութեամբ»	60 կ.
«Ընդարձակ նամականի կամ ընթացիկ թղթակցութիւն»	1 ր. —

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «ГИРЪ».

(կ.) 358. 2—2

ՀՐԱՒԷՐ

Շամքորեցոց ս. Աստուածածին եկեղեցու բոլոր չափահաս ծխականները կիրակի, ապրիլի 27-ին, ժ. $11\frac{1}{2}$-ին հրաւիրվում են երկրորդ ժողովի՝ ընտրելու մի հոգաբարձու։

Բ. մասի գործակալ՝
Ղևոնդ ք. Մամիկօնեան

372. 2—2

Հրաւէր

Կիրակի, ամսիս 27-ին, ցերեկվայ ժամը 11-ին, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ կայանալու է Հավլաբարի ս. Կարապետ եկեղեցու ծխական երրորդ եւ վերջին ժողովը։

Զբաղմունքի առարկան է՝
Դպրոցական նոր շէնքի կառուցումը։

Այսու հրաւիրվում են յիշեալ եկեղեցու բոլոր չափահաս ծխականները ժողովի։

375. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный